Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

205
n-46
1878

ՈՍԿԵԳԻՐՔ

ՀՐԱՀԱՆԳ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

205
Ռ-46
ա.ֆ.
200
Հ608ֆ-ՈՍ

ՈՍԿԵԳԻՐՔ

ՀՐԱՀԱՆԳ

ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

Ի ԳՆԱՑՍ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ

(1004)
Հ 4761
1987 թ.

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆՈՒՆ
ԻՍ. ՂԱԶԱՐ
1878

Հ.Ս.Ս.Հ. ԳՐԱԴԱՐԱՆ
Հայկական Библиотека
7.XI.1922
Հաստատեց Ա. Մաստիկյան
Ա. ՄԱՍՏԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
205-27-60

36933 ա.հ.

258-42

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գրքոյկս՝ զոր կամ ինքն իսկ բարեա-
ցասպարտ և հոգեկիր հեղինակն՝ Սանս
միանձն բենեդիկտեան (Dom Sans de
Sainte-Catherine), և կամ առաջին հրա-
տարակողն՝ վկայեաց և անուանեաց Ոս-
կեգիրս, 'ի փոքրու քանակին՝ ուղղալից
օծութեամբն զմեծահատոր ասատուա-
ծախօս և հոգեշահ մատենից ընդով զտե-
ղի, արժանաւոր դատի և դասի ընդ ա-
ւետարանական մարգարիտսն. զոր ի-
մաստուն խնդրակք երկնավայելուչ վա-
ճառուց՝ ոչ վեհերին փոխանակել ընդ
բազմամթեր գոյից իմաստից. քանզի և
ճառեալն 'ի սմա արդարև մարգարիտ է
մարգարտաց. զոր միայն խորէջն աս-

կեալն է յիմաստնոց և 'ի գիտնոց աշ-
խարհի, և յայտնի գերաշխարհիկն սը-
ղայոց։ Երանի՛ այնպիսեաց տղայացե-
լոց 'ի Քրիստոս. բիւր երանի մանա-
ւանդ որոց 'ի կանուխս տիոց ցաղեւոյթ
և ցկատարած հաստակի՝ մանկաբար գը-
գուին 'ի գերկան գերունակս, և տակա-
ւին 'ի խինձս գոգոյն ոչ ժամանեն. այլ
որչափ 'ի ներքս խաղան և ինքանեն՝ այն-
չափ և խորք խորոց Քրիստոսի կարգան
և անձառելիօք հնչեցուցանեն զանանջս
հոգւոյն. որ և առաւել անչափելի գը-
տանէ զԱստուած 'ի խոնարհութեան
իւրում քան 'ի բարձրութեանն. և
խոստովանի՝ ոչ այլով իւիք հնար ին-
քեան վերբերել առ նոյն՝ բայց՝ միայն
խոնարհութեամբ. և ոչ իւրայոմն ը-
կով՝ այլ նորին ինքեան Աստուածա-
մարդոյն նախագաղափար ամենակա-
տար և ամենալցոյց խոնարհութեամբ։

տուածային՝ խոնարհեալ յանդունդս
ծովածուփ կենցաղոյս՝ բաւեաց վերբե-
րել, 'ի հիացումն երկնից և 'ի փրկու-
թիւն աշխարհի։ Աւետարանն է յերկարել
զբանս 'ի գովեստ սոփերիս. զոր թէ և
չափաւոր ողջմտութեամբ ոք սակաւիկ
մի ընթեռնուցու՝ 'ի միտ առցէ. վասն
այնորիկ և յաճախեաց 'ի ձեռս բարե-
պաշտից բազում անգամ տպագրու-
թեամբ 'ի բնիկ փռանկ լեզու և 'ի
թարգմանութիւնս. որպէս և 'ի մեր
աշխարհիկ ոՀ յեղեալ երբեմն յայլոց,
յայժմուս սիրողացն զգրոցս բարբառ՝
ընձեռի յօգուտ հոգւոր. այլ հնար-
հիւ նորին ինքնակայ ամենեին Հեղոյն
և Խոնարհի, առանց որոյ ոչ ումեք է
կարելի ըմբռնել զայս մարգարիտ առ-
ձեռնպատարաստ, և ոչ իմանալ ճշմար-
տապէս և արդիւնապէս զայս գիւրիմաց
Ոսկեգիրքս, զայս երս չքնաղ, որ ծած-

«Զխոնարհս հոգւով կենդանեմ» Տէր:

Սաղմ. ԼԳ. 18:

ՀՐԱՀԱՆԳ

ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

---

1. Ճշմարտութիւն է աներկբայ և անկեղծ՝ եթէ փակեալ են դրունք ողորմութեանն և արքայութեանն Աստուծոյ ընդդէմ հպարտից, և զի զխոնարհս և եթ ընդունի Տէր առ ինքն: Ուստուցանեն մեզ գիրք սուրբք, եթէ Տէր հակառակ կայ ամբարտաւանից, խոնարհեցուցանէ զբարձրացեալսն. եթէ, հարկ է լինել իբրև զմանկունս փոքրիկունս առ'ի մտանել'ի փառս իւր, և որք ոչն նմանիցին նոցա՝ արտաքոյ մնասցեն. և զի՝ տայ նա զշնորհս իւր հեզից, և բարձր առնէ զխոնարհս: Եւ զի այս այսպէս է, հարկ է յամենայն զօրութենէ մտաց հաւանել, եթէ պարտ

և արժան է քրիստոնէի՝ փութոյ պընդութեամբ կրթիլ 'ի խոնարհութիւն. 'ի բաց հանել 'ի սրտէ զամենայն ամպարհաւաճուութիւն, զամենայն նանրութիւն, զամենայն հպարտութիւն. և ոչ զմիով զանց առնել ճգամբ՝ առ 'ի յաջողել յամենասուրբ յայս ձեռնարկ: Եւ քանզի առանց աստուածային շնորհաց չէ այդմ բաւական, 'ի դէպ է նմա թախանձանօք խնդրել զայն, և խնդրել զօր ամենայն և յամենայն ժամու:

Ամենայն քրիստոնեայ 'ի միտութենէ անտի իւրմէ պարտականեալ է երթալ զկնի հետոյն Քրիստոսի. 'ի վերայ այդրը աստուածայնոյ գաղափարի պարտ է մեզ կերպաձևել զկեանս մեր. այն զի Աստուած մեր և փրկիչ այնքան խոնարհեցոյց զանձն՝ մինչև լինել նախատինք և արհամարհանք մարդկան, առ 'ի բժշկել զայտուցս և զվերս հպարտութեան մերոյ. ուսուցանելով մեզ իւրով օրինակաւ զմիակն ճանապարհ որ տանի յերկինս: — Եւ արդ, ով դու աշակերտեալդ աստուածայնոյ վարդապետին, եթէ կամիցիս գնել զպատուա-

կանդ մարգարիտ՝ որ հաւաստագոյն գրաւական է սրբութեան, և յայտնագոյն նշանակ նախասահմանեալ փրկութեան, ընկալ համբոյր յօժարութեամբ զխրատաքս զոր ընթեռնուս, և մտադիր կրթեաց նոքիմք:

2. Բայց զաչս հոգւոյդ և տես, զի քոյոմսան չունիս և ոչ մի բարի՝ ընդ որ կարիցես մեծամտել և սոնքանալ: Քո սեփական մթերքդ՝ են մեղք, ստութիւն և հիքութիւն. իսկ վասն ձրիոյ որ 'ի քեզ՝ բնութեան և շնորհաց, քանզի յԱստուծոյ 'ի պատճառէ էութեան քո տուեալ են քեզ, նմա միայնոյ վայելեն գովութիւն և փառք: Վասն այսորիկ գուն գործեա զգալ և ճանաչել խորագոյնս զոչնչութիւն քո. և զնոյն խմաստ նուաստութեանդ երկնեա հանապազ 'ի սրտի քում, յամօթ և 'ի կշտամբանս բռնացելոյն 'ի քեզ հպարտութեան:

3. Հաւանեաց սրտի մտօք, եթէ չկք ինչ յայնարհի անտի և բասրելի քան զկամէն մեծարոյ լինել վասն ձրիոյ՝ որք չեն 'ի կամաց անձին, այլ յամենեին ազատ առատապարգև Արարչէն յանօթ

տուեալք ընծայաբար. և «Եթէ առէր՝ զի պարծիս իբրև զչառեալ», (Ա. Կորնթ. գ. 7.) և յանձնէ ինչ հայթ-հայթեալ:

4. Խորհեաց ստէպ և քննեա զքո տկարութիւնդ, զկուրութիւնդ, զվատութիւն, զխստասրտութիւն, զյողդողդութիւն կամաց, զհէշտասէր մեղկութիւնդ, զանզգայութիւն մտացդ յաստուածայինս, զհակամիտութիւն առ արարածս, և զայլ ևս բազմապատիկ վատթար կիրս, որով առլցեալ է բովանդակ բնութիւն քո ապականեալ: Ապա զայսիսի ունելով հաւատս՝ իջո հանապազ զանձն քո 'ի խոնարհ՝ և քան զոչինչն անգամ, և համարեսջիր զքեզ յաչս քո ամենեին փոքր ամենեին անարդ:

5. Մի երբեք մոռացիս զմեղս քո անցեալս: Զմտաւ ածջիր մանաւանդ զմեղս հպարտութեան այնքան դարշելի լինել՝ մինչև և ոչ միոյ այլոյ չարի հաւասարել նմա, ոչ 'ի վերայ երկրի և ոչ 'ի դժոխս: Քանզի դա ապստամբեցոյց զհրեշտակս 'ի յերկինս և խորդաւանեաց 'ի դժոխս. դա ապականեաց զամենայն ազգս մարդկան, և ած 'ի վերայ երկրի անթուելի աղէտս չարեաց՝ որք տևեսցեն մինչև 'ի կատարած աշխարհի, մանաւանդ թէ մինչև 'ի յաւիտեանս: Ցիշեա ընդ նմին, զի հոգի մեղաւորացեալ՝ միայն ատելութեան, անարգանաց և պատժոց է արժանի: Եւ ապա տես թէ որքան ինչ օրէն իցէ քեզ շուք դնել անձինդ, յետ այնքանեաց մեղանաց որովք պարտապան գտանիս:

6. Խորհեաց և զայս, զի չէք եղեան մեծ և անհեղեղ՝ զոր ոչ կարիցես գործել, և յոր ոչ յօժարեսցի բնութիւն քո ապականեալ. և զի միայն ողորմութիւնքն Աստուծոյ և օգնականութիւն շնորհաց նորին զգուշացուցին զքեզ ցարդ. ըստ գերահռչակ առածի Սրբոյն Օգոստինոսի, եթէ Չէք մեղք գործեալ 'ի մարդոյ՝ զոր ոչ կարիցէ գործել և այլ մարդ, եթէ ոչ գոցէ օգնութիւն առ 'ի յԱստուծոյ՝ որով եղեան մարդ: Ողբա 'ի ներքուստ 'ի վերայ այսքանոյ եղկելի պայմանի անձինդ. և աստուստ խմստասիրեալ դէր հաստատութեամբ

'ի մոլ քում՝ ունել զքեզ միշտ 'ի կարդի վառթարագոյն մեղաւորաց։

7. Զմոռաւ ածջիր ստէպ զմահն, զանխուսափելի եղծումն և քակտումն մարմնոյդ, զանաչառ ատեանն Քրիստոսի՝ որում անհրաժեշտ հարկ է յանդիմանելիս, զանենանս դժոխոց որ պատրաստեալ են չարաց, և մանաւանդ ամբարտաւանից նմանողաց արուսեակին անկելոյ։ Ցիշեա ամենայն զգաստութեամբ, զի եթէ անքնինք և անյայտք են դատաստանքն Աստուծոյ, չիք քեզ և ոչ մի հաւաստիք չլինելոյ 'ի թիւս մերժելոց, որք տանջիցին ընդ դիւաց 'ի յաւիտենական տանջանս անդ։ Վասն այսու անստուգութեան միայնոյ արժան էր քեզ կալ յանհնարին խոնարհութեան, և ծածկել զերեսս քո անիբացդնելի ամթով և կորանօք։

8. Մի համարիցես ստանալ երբեք զխոնարհութիւն՝ առանց պատշաճաւոր նմին կրթութեանց, որպիսիք են, քաղցրաբարութիւն, համբերութիւն, հնազանդութիւն, մեռելութիւնք, անձնուրացութիւն, ատելութիւն սեփական

կամաց և մտաց, խոստովանութիւն և ամենախածութիւն ընդ սխալանսդ, և որ սոցին սակի։ Այսու քակտի 'ի քեզ թագաւորութիւն անձնասիրութեան, արմատն անիծապարտ՝ յորմէ վերընձիւղեն ամենայն չարիք քո, և 'ի վեր քան զայլս անտուստ ամբառնան հպարտութիւնդ և ամբարհաւաճութիւնդ։

9. Որքան և հնար է քո՝ կալ զքեզ 'ի լուութեան և յամփոփման մտաց. այլ զգոյշ լեր չլինել դժուարամատոյց և նեղիչ այլոց։ Եւ յորժամ հարկ լիցի քեզ խօսել՝ խօսեաց զգուշութեամբ և պարկեշտօրէն, և իբրու զանդիտելով իմն. հաւատալով ստուգապէս՝ եթէ չէս դու արժանի ունկնդրութեան, և թէ՝ ոչ կարես բնաւ ասել ինչ բան բարեքիկ՝ որ իցէ արժանաւոր յուշի ունելոյ լսողացն առ 'ի քէն։ Եւ եթէ յիրաւի դէպ լիցի չլսել նոցա քեզ՝ թէպէտ արհամարհանօք թէպէտ այլազգ, մի տայցես բնաւ դժկամակութեան ինչ ցոյց, այլ ուրախ լեր մանաւանդ 'ի ներքուստ ընդ նուաստանալդ. հաւանեցո զանձն քո՝ եթէ են նոցա իրաւունք, և

ասա ցքեզ. Ոչ եմ ես զի իշխեցից ընուլ զմիտս այլոց՝ իմովք ինչ խելօք կամ ստեղծմամբք հանճարոյ իմոյ:

10. Մեծապէս փութոյ պնդութեամբ զգուշացիր յամենայն խրոխտ և 'ի պերճական բանից. յամենայնէ՝ որ զաւագութեան կամ զՀոխութեան ինչ բերցէ կերպարանս. որպիսի են ոճք արուեստակեալք, հիւսք բանից պաճուճեալք և մարմնէցուցիչք: Մի ասեր ընաւ բան որ երևեցուսցէ զքեզ այր կորովամիտ կամ պատուաւոր և մեծարեալ, վարեալ 'ի գործս կարևորս, և կամ ունակ այլոց ինչ աղնիւ ձրիոյ: Մինով բանիւ, մի երբեք խօսեսցիս զանձնէ, և մի ասիցես ինչ որ 'ի պարծանս կամ 'ի շահ անձինդ ելցէ:

11. Զգոյշ կաց դարձեալ 'ի զրուցելդ՝ 'ի քաջադէպ հանճարաբանութեանց անտի և 'ի հաճոյարար հնարագիւտ ասից, յամենայն կատակաբանութենէ, և դէխուվին յամենայն բանէ որ զաչխարհի հոտ ունիցի: Նաև 'ի հոդևորսն որ 'ի զգուշութիւն և 'ի խրատն՝ մի լենիցիս շատախօս, բայց եթէ 'ի

Ս.Ա.Ս.Ի. ՀԱՆՐՈՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս.Ս.Ր.Ա. Պետական Գրադարան
7/XI

պարտուց պաշտամանդ և յառաջ քան զխօսելդ՝ հարց զկարծիս հմտիցն յերին յայնմիկ, յորոց կարիցես ասանուելոյս և օգտիլ: Քանզի դաս այդպիսի սակաւ այլոց՝ ցոյցս բերէ գիտասուութեան և պայծառութեան մտաց, և փքացուցանէ զնպարտութիւն՝ որով վարակեալ է սիրտ մեր:

12. Փախիր, որքան և հնար է քեզ, յանուանեալն հետաքրքրութենէ. մի սիրեր տեսանել զկոչեցեալն աշխարհ-օրէն գեղեցիկս, չքեղս և սակաւագիւտս. մի փափագեր գիտել այլ ինչ քան զպատշաճեալն պարտուցդ և վիճակի, և որ ինչ կարողն է սատարել քեզ 'ի կատարելութիւն անձին և 'ի փրկութիւն:

13. Հանապազ և անվրէպ հատո և ցոյց զամենայն նշանակ մեծարանաց և յարգանաց, ոչ միայն առ վեհագոյնսն քան զքեզ՝ այլ և առ հաւասարս և առ ստորնագոյնս. և էլ ընդ քեզ 'ի պատուգրութեան, ըստ բանից Առաքելոյն Պօղոսի. լեր յառաջադէմ 'ի մատուցանել իւրաքանչիւր ումբք զպարտս քաղա-

1004
20527-60

քավարութեան՝ ըստ սահմանի սովո-
րեալ հրահանգաց. և ջանա աւելի ևս
քան զոր պարտիսդ՝ հատուցանել ամ-
ենեցուն։

14. Ընդարեա միշտ, ըստ խրատու Ա-
ւետարանին՝ զյետին և ստորին տեղին,
և հաւատա առանց ինչ երկբայութեան՝
եթէ այն է քեզ անկ. և յամենայն պէտս
կենաց կալ քեզ զնուազ գիւրարարան,
իբրու քան զընաւս փանաքի եղով քո.
և հաւանեաց, թէ յամենայն իրս լուա-
գոյնքն'ի ճահ են այլոց ամենեցուն, իսկ
քեզ՝ դուշնաքեայն. վասն զի յոյժ ան-
արժան ես. և փափագեաց յամենայն
սրտէ՝ զի եղիցի քեզ այսպէս յամենայն
դէպս։

15. Յորժամ զուրկ զքեզ դատանիցես
յերկրաւոր սփոփանաց և 'ի հոգևոր
մխիթարութեանց, հաւատա հաստա-
տութեամբ՝ եթէ տակաւին շատ են
քեզ զոր ունիսդ, և աւելի քան զար-
ժանն քո. և գոհացիր'ի կարօտութեան
քում։

16. Մի դադարիր երբեք յամբաս-
տանելոյ զանձդ, 'ի կշտամբելոյ և 'ի

դատապարտելոյ։ Ա՛րկ ընդ անաչառ դա-
տաստանաւ և քննութեամբ զամենայն
գործս քո՝ իբրև վարակեալս ամենազան
թերութեամբք և անգուլ սագրանօք
անձնասիրութեան։ Ստէպ խոստեալ ա-
նարգեա զգնացս բարուցդ, վասն պա-
կասելոյ'ի գործոց քոց խոհեմութեան,
պարզութեան և մաքրութեան սրտի։
Լեր մշտադատ քննիչ անձին քում, և
մի երբեք ներեր քեզ։ Անարդ վարկա-
նել զանձն և հանապազ մեղադիր լինել
ինքեան՝ ճշմարիտ աղբերք են խոնար-
հութեան և կատարելութեան քրիս-
տոնէականի։

17. Հաւանեաց սրտի մտօք եթէ վասն
անհեղեղ մեծութեան յանցանաց քոց
և դարշութեան եղերանցդ զզուելի ես
ամենայն աշխարհի. քանզի ստոյգ է ա-
մենևիմբ՝ եթէ մեղք առաւել զաղրա-
ցուցանեն զհոգի առաջի Աստուծոյ, և
կարող են զզուեցուցանել զմարդիկ ա-
ռաւել քան զերբ նեխեալ դիականց ա-
ռաջի աչաց մերոց։ Զայս խորհելով՝
զարմացիս՝ թէ զի՞նդ հանդուրժէն
քեզ ցայդ վայր մնալ յաշխարհի, և

զնաՀրդ ոչ Հալածեն զքեզ 'ի միջոյ մարդ-
կան՝ որպէս զԺամանակ ախտիւ վարակեալ։

18. Զգոյշ լեր որպէս 'ի չարէ մեծ
յոյժ՝ 'ի դատելոյ զայլս որով և է օրի-
նակաւ. նա մանաւանդ ջանա 'ի բարի
մեկնել զամենայն բանս և զգործս նո-
ցա. որոնեալքեր և հնարեալքեր Ճարտա-
րութեամբ գթոյ՝ բարուրս անմեղա-
գրութեան և պաշտպանութեան, և լեր
բարեխօս նոցն ընկերի քում։ Եւ եթէ
չեցէ մարթ այդմ այդպէս լինել՝ վասն
յայտնապէս ծանակ կալոյ չարին գոր-
ծեցելոյ, տակաւին անմեղագիր լեր՝ որ-
չափ 'ի կարի քում է, յանզգուշութիւն
ինչ նորին արկանելով զինքեան կամ 'ի
յանկարծահաս դէպս, կամ 'ի բանու-
թիւն փորձութեանն և 'ի մախանս հրա-
պուրանաց, և կամ յայլ որ ինչ սոցին
նման պատճառս. կամ դէթ հրաժարե-
ցո զմիտսդ 'ի խորհելոյ յայն՝ բայց եթէ
'ի հարկէ վիճակիդ ստիպեցես դարման
տանել իրացն։ Այս ևս կրթութիւն ա-
ռատաբուղխ աղբիւր է Ճշմարիտ խո-
նարհութեան։

19. Սովորութիւն արա քեզ մի ուամբ

ընդդիմանալ 'ի խօսակցութիւնս,
յորժամ ինդիրք եցեն զերաց զոր մարթ
եցէ ձգել և յայս և յայն կողմն։ Մի վի-
ճեր ջերմաջերմն պնդութեամբ, այլ
տուր տեղի՝ յորժամ անընդունակ լի-
ցին քո կարծեաց, և կաց 'ի խնամարհա-
կան լռութեան։ Այսպէս արա և յիրս
դուշնաքեայս, թէպէտև գիտիցես ըս-
տուգիւ եթէ չէ Ճշմարիտ զոր այլք
այնպէս պնդեն լինել։ Իսկ 'ի դէպս յորս
պարտք են պաշտպան կալ Ճշմարտու-
թեան՝ արասջիր առանց բրդելոյ 'ի ցա-
սումն և երդիծանելոյ. գիւրագոյն հա-
մոզկեր լիցես քաղցրութեամբ՝ քան
ուժգնութեամբ և բարկութեամբ։

20. Ի վեր քան զամենայն գուն գոր-
ծեա չարամեցուցանել զընկեր քո, որ-
քան և ստորնագոյն քան զքեզ եցէ,
մի բանիւ և մի գործով, և մի վարմամբ
գնացից ընդ նմա. մի տացես երբեք նմա
պատճառ վշտանալոյ, բայց եթէ բռնա-
դատիցես 'ի պարտուց կամ 'ի հնազան-
դութենէ և 'ի սիրոյ. քանզի արամե-
ցուցանել զընկերն՝ զՔրիստոս է սրբա-
մեցուցանել, որ ինքեան համարի արա-

ռեալ՝ զոր ինչ ոք և ընդ կրսերագոյնն յիւրայոցն առնիցէ։

21. ԵԹԷ արասցէ ինչ ոք քեզ ՚ի ներս կամ նախատինս, որ զինչ և է, մի ակն կալցես սարջանալոյ նորա և գալոյ խրնդրել ՚ի քէն ներումն. այլ որպէս թէ ոչ գոյ իցես որ զրկեցարն՝ յառաջեա քան զնա խոնարհութեամբ հայցել ներումն թողութեան վասն առթին զոր ետուրդ նմա՝ գրգռելով. և զնա անմեղադիր առնելով՝ զքեզ ինքն կացո պարտական ամենայն ՚ի սասուն։

22. ԵԹԷ գոցի ոք որ յաւէտ նեղիցէ զքեզ, և սխորժիցէ զկնեցուցանել յամենայն գէպս՝ նախատանօք, արհամարհութեամբք, զրպարտութեամբք, և այլ որ և է օրինակաւ, համարեա զնա գործի ՚ի ձեռս Աստուծոյ, և մարդ՝ որով անբաւ ողորմութիւն նորա կամիցի բուժել զհոգի քո ՚ի հնացեալ վիրաց հրպարտութեանդ. սիրեսջիր զնա որպէս բարեացասարս մեծ։

23. Բարկութիւն՝ քանզի անճահ և անտանելի է, մանաւանդ յանձինս բարեպաշտնս, և զի ՚ի հպարտութենէ

անտի մերմէ յառաջ գայ գլխովին այդ ախտ, գուն գործեա զդէմ ուռնել նմին մեծաւ անդորրութեամբ ոգւոյ և քաղցրութեամբ. մինչ զի և ՚ի նախատիլ քում յայլմէ, որքան և գաւռն իցեն նախատինքն՝ ոչ թէ միայն մի զայրասցես, այլ և երթիցես խոնարհութեամբ յոզոք անկանել՝ զի ներող լիցի քեզ։

24. Համբերութեամբ և արդահատութեամբ տար թերութեան և տկարութեան այլոց. բայց մի համարիր թէ անկ իցէ և այլոց նոլին օրինակաւ արդահատել քեզ. այլ մանաւանդ համարեաց թէ վասն քո չեն շատ ամենայն խստութիւնք նոցա, և թէ յանցանք քո չեն արժանի ներելոյ ողորմութեան։

25. ԵԹԷ երախտապարտ զոք կացուցեր, թէպէտ և մեծամեծ բարիս և շնորհս առնելով, մի ակն կալեալ մեր փոխարինի առ ՚ի նմանէ կամ շնորհակալութեան, կամ բարիս ընդ բարւոյ քեզ հատուցանելոյ. այլ ասա յանժամ. Ես զոր պարան էր առնել՝ արարի. և նա կարէ առանց ինչ ընդ բանս ածելոյ՝ չհամարել զիս երախտագործ

կամ մեծարելի, զի անարժան եմ ես։

26. Խոնարհեցո զանձն քո առհասարակ յամենայն դէպս, այլ առաւել առ այնոսիկ յորոց խորշիսն և գաբշիս, և մի ասասցես որպէս ասեն ոմանք. Զատեսայ ինչ ես զնա, այլ ոչ հանդուրժեմ լինել ընդ նմա։ Ի հպարտութենէ անտի ծագէ դժկամակութիւնդ, և 'ի չնուաճելոյ՝ օգնականութեամբ վերին շնորհացն՝ զընդաբոյս գոռոզութիւնն և զենքնասիրութիւն. զի եթէ անձնասուրբ լինիցին յազգմունս շնորհացն, շնչանէր 'ի նոսա զզուանքն զոր զգային՝ ճշմարիտ խոնարհութեամբ, և կարողք լինէին տանել ամենայն դժուարահամբոյր և սոսկ բարուց. տի նա, յօժարեցուցանիցին զնոսա շնորհքն յամախել իսկ առ այնպիսի մարդիկ, վասն հոգևոր օգտին և վարձուց արժանի լինելոյ։

27. Թէպէտ տուր 'ի սրտէ ամենեցուն դնել քեզ զամենայն նախատինս և անարգանս. այլ քեզ մի համարիցիս նեբրելի հատուցանել փոխարէն՝ բայց զբարեկամութիւն և զմեծարանս, և միանգամայն զամենայն բարիս, վասն չարեացն զոր ընդունիցիս, որպէս ասէ Առաքեալն. Յաղթել բարեաւն՝ չարին։

28. Մի բացցես երբեք զբերան քո 'ի տրտունջ զուսանքէ, զոր և է ընկալեալ ինչս կամ զրկանս, կամ որպիսի և է չարակամութեան հանդիպեալ. հաւանեաց, եթէ ոչ է հնար առնել քեզ ինչս՝ առաւել քան զպատուհասն՝ որում արժանի էիր։

29. Յամենայն 'ի փորձութիւնս և 'ի վիշտս որ թէ պատահիցին քեզ, յօժարութեամբ և խնդութեամբ տար նեղութեանցդ, յիշելով զի արժանի ես դոցին, նա և առաւելագունի քան զայդ, և անարժան ամենայն մխիթարութեց։ Մի փափագեր զերծանել 'ի նոցանէ, բայց եթէ ակներև տեսանելով զվտանգ գթելոյ և մեղանչելոյ առ Աստուած։ Մի և դիւրելոյ իսկ վշտացդ հետամուտ լիցիս, մանաւանդ յորժամ 'ի վերայ հասցես եթէ Աստուած առաքէ զդոսին առ 'ի խոնարհեցուցանել զքեզ և բժշկել զդոռոզութիւն և զամբարտաւանութիւն ոգւոյդ. այլ ասասջիր ընդ արքունական մարգարէին. « Բարի է զի

խոնարհ արարեր զիս, որպէս զի ուսայց զարդարութիւնս քո »։

30. Որքան և հնար է՝ մի յայտներ զԹեթև վիշտս և ցաւս զոր կրես. զոր օրինակ, զքաղց, զծարաւ, զտօթ և զցուրտ, զցաւ գլխոյ, և զայլ այսպիսի անհանգստութիւնս, բայց եթէ առ հարկէ ծանուցանելոյ 'ի պահեստ կենաց և 'ի դարման առողջութեան։

31. Փախիր 'ի հասարակի յամենայն շքեղ պաշտամանց և 'ի փառաւոր բարձից, այլ և խնամով խնդրեա զանարգագոյնսն, եթէ ոչ կամքն Աստուծոյ կոչեսցեն զքեզ յաւագագոյնս. այլ մի հրաժարիցես և յայնժամ ըստ օրինակի փառասիրացն, որպէս զի առաւել ևս թախանձանօք հրաւիրեսցես, և բրնդատուութեամբ ինն ընդունիցես, կամ մնոսի պանծանօք, կամ առ լաւ և գովելի համարելոյ։ Փախիր յայդցանէ սոսկապէս. գիտելով Ճշմարտապէս զանարգութիւն և զակարութիւն անձինդ, և ստոյգ սիրով սրբոյ խոնարհութեան։

32. Այսու մտօք՝ մի գարշիր և յուտեստ՝ 'ի խոշոր և յանպատճոյճ կերա-

կրոց՝ որ քո առաջի դնիցին. այլ արա ըստ օրինակի աղքատաց և մուրացկաց՝ որք յօժարութեամբ ուտեն առ դրան տանց զյաւելուածս և զնոտանս զոր տան նոցա, և բարեբաղդիկս իսկ համարին զանձինս՝ զի գոնն զայն։

33. Եթէ յանդիմանիցիս երբեք յանիրաւի կամ դատիցիս վասն գործոց քոց, նաև 'ի սաստկագունիցն քան զքեզ, կամ յայնպիսեաց որք յոյժ առաւել քան զքեզ յանդիմանելիք եցեն և յիրս կարևորս յանցուցեալք, մի վասն արդոյիկ անարգեր զնոսան և բրդիր 'ի բարկութիւն. այլ և փոխանակ 'ի չքմեղս լինելոյ՝ ձայնակից լեր նմա ընդգէմ քո անձինդ, և օգնեա նմա 'ի քաջիկ ևս ցուցանել զքեզ արժանի անարգանաց և խոտելոյ. քաւ միայն եթէ գայթակղութեան վտանգ կայցէ ընկերիդ 'ի կարծեցեալ սխալանաց քոց, կամ թէ յայտնապէս ինչ հասցէ նմա։ Հաստատեա 'ի սրտի քում՝ արդարև երաւացի լինել զկշտամբանսն զոր լուար. հաւանեաց, եթէ կան միշտ 'ի քեզ թերութիւնք՝ որ դիւրագոյնք են

յերևել քան 'ի յայտնել, և վասն սը-
կարութեան քո տակաւին ծածկեն ա-
ռաւել քան զկէսն։ Այսու յառաջեսցես
երագ երագ յուղղութեան խոնարհու-
թեան, զերծանելով 'ի բաղում վտան-
գաց. քանզի միշտ հպարտութեան և
ամբարհաւաճութեան մթերքը են զանձն
'ի չքմեղս կացուցանելն և մեղադրելն
զայլոց դատաստան։

34. Մեծ հնարքը են 'ի ստացումն խո-
նարհութեան՝ չփափագելն յաչս մտա-
նել և սիրիլ ընտրութեամբ յումեքէ։
Քանզի չէ մարթ հոգւոյ սիրել ինչ զոր
ոչ մեծարիցէ. յայտ է թէ սիրելի լինել
և յարգոյ լինել՝ անբաժան կցորդու-
թիւն ունին, և անմարթ է զմին կամել
և զմիւսն ոչ։ Արդ եթէ ոչմարտապէս
փափագելով զարգանալ 'ի խոնարհու-
թեան՝ չկամիցես արգոյ համարիլ յաչս
այլոց, ապա մի խնդրեր և հաճոյ լինել
սրտից նոցա։ Մեծամեծ շահս գտցես
այսու. քանզի, նախ, հոգի քո չցան-
կանալով ընտանութեան արարածոց՝
երթիցէ հանդէպ 'ի սրբազան վէրս
Փրկչին իւրոյ. 'ի պաշտելի սրտի անդ

նորուն գտցէ զանդորը անբացատրելի
գոհութեան. քանզի առ սէր նորին յօ-
ժարութեամբ հրաժարելով յամենայն
մարդկեղէն սրտից՝ կարող լիցի ընդու-
նել առատապէս զմեղրահոսան ծորանս
աստուածային մխիթարութեանցն, յո-
րոց վրէպ գտանիւր՝ եթէ 'ի մարդկային
սփոփանս զակատեալ լիներ. զի մխի-
թարութիւնք աստուածայինք այնքան
մաքուրք են և փափուկք՝ մինչև գրեա-
թէ անխառն դող յօտարէ, և ոչ լինին
տուեալ մարդոյ՝ բայց ըստ չափու ու-
ծանալոյ նորին 'ի փափկութեանց կեն-
ցաղոյս. այն զի և ճահագոյն է ամբո-
փիլ յԱստուած՝ միանալով ընդ նմին
խոկմամբ յանդիմանակացութեան նո-
րին և անսահման կատարելութեանցն։
Դարձեալ, որպէս չէք ինչ քաղցր քան
զսիրելն յայլոց, յորժամ վասն Աստու-
ծոյ հրաժարիցես 'ի քաղցրութենէ
սրտի, զի մի օտար ինչ բաժանակից լի-
ցի սիրոյ սրտիդ որ առ Աստուած, ե-
զիցի այն պատարագ անուշահոտ և
յոյժ շահաւէտ քեզ։ Եւ մի զանգի-
տեացես, թէ գուցէ կրթութիւնդ այդ

ցրտացուսցէ 'ի քեզ զսէրն որ առ ընկերն. նա մանաւանդ սիրեսցես զնա մաքրագոյն ևս գորովով և կատարեալագոյն սիրով. իբրու զի ոչ առ օգտի սիրոյ անձինդ յայն բերիս՝ այլ միայն վասն Աստուծոյ հաճոյ լինելոյ՝ գործելով զոր նայն ախորժէ։

35. Զամենայն զոր և առնիցես, զիրքունս անգամ, արա քաջ ուշի ուշով, անթերի և առանց իրիք զանցառութեան. քանզի ամբարտաւանութեան է գործէն 'ի հարևանցի և յապուրակի։ Որ արդարև խոնարհն է՝ հանապազ զգուշութեամբ գործէ, և երկնչի 'ի վրիպելոյ և 'ի մանունս անգամ։ Յայս սակս նախամեծար գրեսջիր զկրթութիւն յոյժ սովորական բարեպաշտութեանց. և 'ի հասարակի, զգուշացիր 'ի տարօրինակ գործոց՝ յոր թերևս հրապուրեսցէ զքեզ բերումն բարուցդ. քանզի որպէս հպարտութիւն սիրէ եզական երևել, հաճի և խոնարհութիւն ընդ հասարակացն և ընդ սովորական գործս։

36. Հաւանեաց, թէ չիք քեզ խորհրդ-

դական նենգապատիր և խիթալի քան թէ դու ինքեանդ, և զանդիտելով զգուշացիր յամենայն քո սեփական խմացուածոց՝ իբրու յառաջ եկելոց 'ի մթերից կուրութեան և ապականութեան։ Այլ և հաւատա, թէ զոր և զքէն խորհիս կամ կարծես՝ արժան է ընդ քննութեամբ այլոց արկանել. վասն այսորիկ որքան և մարթ է՝ զխորհուրդս և զիզձս քո արկ ընդ դատաստանաւ այլոց ուրուք, և մի առանց խորհրդակցութեան ընդ այլում՝ բուռն հարցես զիմեքէ։ Եւ եթէ դէպ իսկ լիցի խրատու այլոց ոչ քան զքոյն բարւոք լինել, եթէ չգուցէ 'ի նմին խէթ մեղաց կամ ինամսու այլում, նախապատուեա զայն քան զոր 'ի մտիդ ունէիր. զի մեծ յառաջադիմութիւն խոնարհութեան է՝ զոհել զիւր ուրոյն խորհուրդ մտաց։ Եւ փոխարէն ստացիս անդորրութիւն ներքին, որ լցցէ զթերութիւն կորստեանն ինչ որ 'ի փոքրաշահ խրատուէ անտի օտարին։

37. Յոր աստիճան շնորհաց և առաքինութեան և հասցես, որպիսի տուրս աղօթից և ունիցիս, և որքան երկար

ժամանակս և կեցեալ լցէ քո յանմեղութեան և 'ի բարեպաշտութեան, դնա միշտ երկիւղիւ, և մի երբեք յանձն լիցես ապաստան, մանաւանդ 'ի մասին ողջախոհութեան: Յուշ լիցի քեզ զի կրես հանապազ յանձին քում անսպառ մթերս խառնակութեան և անցամաքելի աղբիւր մեղաց. և զի ես միշտ տկար, յողդողդ և անհաւատարիմ. վասն այսորիկ զգուշութեամբ հանդարտեա՛ց յամենայն ժամ. խլց փակեա զաչս և զականջս, զի մի տեսցես և մի խմացիս ինչ որ արատեսցէ զոգիդ. փախիր և 'ի փոքրունց անգամ առեթից վտանգաց. հրաժարեա յանօգուտ զբուցատրութենէ ընդ տարասեռի. և եթէ հարկ լիցի խօսել՝ կա՛ց զուսպ և պարկեշտ յոյժ՝ մինչև գրեաթէ 'ի խղճմտութիւն: Եւ քանզի քեզէն ինչ ոչ կարես առանց Աստուծոյ շնորհացն, աղաչեա հանապազ զերեսս նորա ողորմել քեզ, և մի թողուլ յօգնականութենէ և ոչ մի վայրկեան:

38. Որպիսի տաղանդ հանձարոյ և լցէ քո ընդալեալ 'ի վերուստ, և որպիսի վարկ համբաւոյ, դու հանապազ հաստատութեամբ պինդ կալ՝ որպէս 'ի փորձոյ՝ զծանօթութիւն և զգիտակցութիւն տկարութեան, անբաւականութեան և ոչնչութեան քո: Փոքրը-կացիր քան զմանկտի փոքրիկ անգամ. դժուարացիր ընդ գովութիւն տուեալ քեզ, և հրաժարեա 'ի պատուոյ որ քեզ մատուցանիցի: Զարմացիր ընդ պարզմտութիւն նոցա՝ որոց շլացեալ լիս 'ի սնոտի փայլմանէն զոր տեսցեն 'ի քեզ՝ դիցեն քեզ շուք որում չես արժանի, և գոգջիր լիս թէ ծաղր առնիցեն զքեզ: Իսկ եթէ գացի ոք որ ոչ առեալ ակն յարդեանց քոց՝ խնդրիցէ մանաւանդ ընդ վայր հարկանել զքեզ յամենայն դէպս, կալջիր զնա երբև քաջ կշռադատ, և ասա. Դա լաւ քան զամենայն մարդիկ ճանաչէ զիս. պաշտօն տար նմա՝ եթէ կարես. և հաւատա զնա արդարև օգտակարագոյն հոգւոյ քում՝ քան զմատուցողն քեզ մեծարանս, որոց չես արժանի: Եւ 'ի վերայ այսոցիկ մի կարծիցես խոնարհութիւն ինչ լինել զայդ՝ այլ արդարութիւն և ճշմարտութիւն:

39. Եթէ հասցեն քեզ զլկանք մեծք կամ ծանր զզուանք, մի յիշեր զանձն յորմէ ինասեցարդ, այլ ամբարձ պաչս քո յերկինս և նկատեաց զԱստուած, որ տեսչութեամբն այսպէս հաձեցաւ առնել ընդ քեզ, կամ առ 'ի քաւել զյանցանս քո, կամ առ 'ի մերժել 'ի քէն զոգի հպարտութեան, տալով քեզ առիթ կրթանաց 'ի համբերութեան և 'ի խոնարհութեան: Եւ եթէ ասիցեն խորհուրդք քո, եթէ՝ Աստուած վասն հայրական սիրոյն թոյլ էտ այդպէս չարաչար վարիլ ընդ քեզ, բայց մարդն՝ յորոյ ձեռն եղև քեզ այդ՝ ոչ նովին մտօք արար զոր արարն, այլ քինու և ատելութեամբ, 'ի բաց թօթափեա խսպառ զմտածութիւնդ զայդ. զի Աստուծոյ միայն է ընթեռնուլ զխորս սրտի և քննել զդաղտնիս խորհրդոց մարդկան:

40. Եթէ գործ ինչ դժուարութեան ապրասցես ընկերի քում, զոր օրինակ, պատել զվերս կամ դարման տանել հիւանդի, և որ սոցին նման, թէպէտ և բազում աշխատութիւնք իցեն քո և յոյժ տառապեալ իցես վասն սիրոյն

Աստուծոյ, մի համարիր արարեալ սէր, այլ մանաւանդ համոզակեր լեր անձինդ և դիր 'ի մտի՝ եթէ դու ընկալար սէր. և ասա ցանձն քո. Պատիւ մեծ է ինձ պաշտօնս այս՝ որում չէի բնաւ արժանի: Որ ճշմարտիւ խոնարհն է՝ բարերարս ինքեան համարի զորս հաձինն ընդունել սպաս յիւրմէ, և ժոյժ ունին համբերութեամբ զի ծառայեսցէ նոցին:

41. Եւ եթէ դէպ լինցի քեզ 'ի սպասու ընկերիդ առնել ինչ ծառայութիւն անարդ և նուաստացուցիչ, ընկալ խընդութեամբ զպատեհդ, և այնպիսի խոնարհութեամբ՝ որպէս թէ դու ամենեցուն ծառայ էիր, և այլք ամենեքեան տեարք քո և հրամայողք. նաև առ այնոսիկ՝ քան զորս ասպիճանաւ կարգիդ վեհագոյն իցես՝ մի զանց առնիցես 'ի դէպ ժամու մատուցանել և զբեռնագոյն սպաս ծառայութեան: Սովին կրթութեամբ շահեսցիս գանձ անբաւ առաքինութեան և շնորհաց. և յայս սակս իսկարժան է քեզ փութալ յայդ, այնպիսի եռանդեամբ՝ որով մարդիկ աշխարհիս ջանան պահել զսեփականութ-

թիւնս և զերաւունս իւրեանց։ Եւ զի միանգամայն ասացից, աշխարհս համ-
բրէն ոչ արժէ և զգոյշն ինչ մասն խոս-
նարհութեան՝ զոր այդու ստասցիս կրը-
թութեամբ։

42. Մի միոր յիրս որք ոչն պատակ-
նին քեզ, և վասն որոց ոչ ունիցիս տալ
համարս Աստուծոյ կամ մարդկան. զի
խնամ առ այդպիսիս ունել՝ նշանակ է
թաքուն հպարտութեան և սնոտի յան-
ձնապատանութեան, որ սնուցեալ ա-
ճեցուցանէ զընդունայնութիւն և ծնա-
նի բազմապատիկ հոգս և տագնապս և
ընդվայրայածութիւնս մտաց։ Ընդ հա-
կառակն, հոգալն միայն զպարտուց իւ-
րոց՝ բղխէ անդորր հոգւոյ և խաղաղու-
թիւն, ըստ գեղեցիկ առածի գրոց Նը-
մանութեան Ֆրիստոսի. « Որ լուէ զա-
մենայնէ՝ հանգարտէ յամենայնէ »։

43. Եթէ գործ ինչ մեծի ճգնութեան
առնիցես, հաւանեաց, 'ի զգուշութիւն
սնապարծութեան որ յաճախ խանգարէ
զգործն, եթէ ոչ առ այլ ինչ զրկես
զանձնդ 'ի վայելչին յոր այլք վայելեն,
բայց զի չէ անկ մեղաւորի որ երբեմն

զքեզն ելցէ՝ գիւրութիւն և հանգիստ,
որոց չես արժանի, վասն անթիւ յան-
ցանացդ զոր յանցեար և հանապազ-
ութեայ դրժանաց պարտուցդ։ Յիշեա կա-
րեւոր քեզ յոյժ լինել զգործս ապաշ-
խարութեան, առ 'ի զսպել զթափ կրեցդ
և ունել զքեզ 'ի չափու պարտուցդ,
որպէս պէտք են սանձի և դանդանա-
ւանդի 'ի նուաճել զերիվար ամենի. իսկ
այլոց որ հեզութեամբ բարուցն և օ-
ժանդակութեամբ շնորհաց գիւրայօ-
ժարքն են 'ի կատարումն պարտուց՝ չեն
պէտք այդոցնիկ։

44. Յամենայն նուագս յոր թէ զգայ-
ցես գրգիռ գժկամակութեան և ան-
համբերութեան 'ի վերս կամ յարհա-
մարհանս հանդիպեալս, զգէմկալ պըն-
դութեամբ՝ փորձութեանդ. յիշատա-
կաւ անթիւ մեղացդ՝ վասն որոց սաստ-
կագունից պարտական էիր պատժոց
քան զոր կրեան ինչ։ Յորդորեա մտա-
ւանդ զոգիդ 'ի խնդութիւն ընդ այն,
զի արդարութիւնն Աստուծոյ՝ որ զէն
արքունական է 'ի ձեռին իւրում, ըստ
Իմաստնոյն, « Զգեցցի զրահս զարդա-

բութիւն», կատարի 'ի քեզ և 'ի վերայ քո։ Պաշտեա զարդարութիւնն իբրև զգերունակ յատկութիւն Աստուածութեան, և պատկառ կայ հարուածոց նորին՝ որպէս աղբերաց գթութեան և շնորհաց. Ճաշակեա զքաղցրութիւն տանջանաց յայդպիսւոյ հայրական ձեռանէ՝ 'ի կենցաղումս. և կատարեալ և անթերի հլութեամբ ընկալ զնոչտանգանն. և ասա ընդ Սրբոյն Օգոստինոսի. «Ասէն կիզեա, ասէն խղեա, զի յաւիտեան խնայեսցես»։ Վտարանջել 'ի վչտաց՝ ապստամբութիւն եմն է 'ի փրկարար արդարութենէ Աստուծոյ մերոյ, և արհամարհանօք մերժել զբաժակն՝ զոր ողորմելով մատուցանէ քեզ, յորմէ և նախ ինքն՝ որ անմեղն էր ցիսուս՝ էարբ։

45. Եթէ դէպ լիցի քեզ գթել 'ի վրիպանս՝ որով արհամարհ երևիցիս յաչս տեսողացն, ցաւեաց ընդ թշնամանան զոր եդեր Աստուծոյ, և ընդ գայթակղութիւն զոր ետուրդ այլոց. այլ զանարգանսն և զամօթ որ հասցեն քեզ գործովդ այդու՝ ընկալ գոհութեամբ,

որպէս ականս պատուականս և որպէս գանձ մեծ՝ զոր հաճեցաւ Աստուած պարգևել քեզ, յուղղութիւն սխալանացդ և 'ի յարդարել զքեզ առաւել ևս խոնարհ և առաքինի։ Իսկ եթէ անարգանքդ վրդովէն զքեզ և անհանգստեն, ծանիր զի չունիս խոնարհութիւն ճշմարիտ, այլ տակաւին խմորեալ ես թունով հպարտութեան. աղաչեսջիր յայնժամ զԱստուած պնդադոյն թախանձանօք՝ բժշկել զքեզ և փրկել. զի եթէ ոչ գթասցի 'ի քեզ՝ անկցես 'ի յոլովագոյնս ևս անկարգութիւնս։

46. Եթէ գտցի ոք 'ի միջի այնոցիկ ընդ որս կենակցիսն՝ որ արհամարհ թուելցի յաչս քո, գործ զգօնութեան է յայնժամ խորհրդածել և որոնել 'ի նմա բարի բարի յատկութիւնս, զձիրս ընութեան կամ զշնորհաց՝ որ տուեալ լիցեն նմա յաստուածուստ, փոխանակ թերութեանցն զոր ոգի քո հպարտ և նախանձոտ յանդիման առնէ քեզ. և 'ի նշմարել քում 'ի նմա զբարին և զարգոյն՝ շինջուսցես այնու 'ի քեզ զգրգիռ արհամարհութեանդ, նաև գտն գոր-

ծեսցես պատուել զնա։ Գոնեա այս ինչ յայտ լեցի քեզ, զի արարած է և նա Աստուծոյ՝ հաստատեալ 'ի պատկեր նորա, գնեալ արեամբ Որդւոյն Միածնի, կնքեալ քրիստոնեայ՝ կնքով Աստուածութեան, հոգի ընդունակ տեսութեանն Աստուծոյ և մշանջենաւոր վայելիցն, և թերևս նախասահմանեալ 'ի փրկութիւն՝ յանքնելի և յերկրպագելի խորհուրդս տեսչութեանն նորա։ Եւ ո՞ իսկ գիտէ զնորհսն զոր եհեղ Աստուած 'ի սիրա նորա, կամ զոր շնորհեցոյն է յետ սակաւուց։ Այլ և առանց ինչ ընդ այսոսիկ դալոյ՝ լաւ ևս լցեալ քեզ թերևս անդէն 'ի սկզբանն 'ի բաց հերքել 'ի քէն զայդպիսի խորհուրդ՝ որպէս ժանտաժուտ շունչ փորձողին, ասելով ցնա, թէ՝ ոչ միայն այդ այր՝ այլ և յետնագոյնն 'ի մարդկանէ արժանաւոր քան զես է. և կայ մնա անտեղեսալի յայսմ՝ 'ի սոյն հաւանութեան։

47. Ի լսել քում դովեստ զանձնէդ՝ զարհուրեալ սոսկա 'ի խորոց սրտիդ, և երկիր՝ մի գուցէ այն միայն լեցի վարձ սակաւ ինչ բարւոյն զոր թէ գործեալ

լցես։ Մանիր 'ի ներքուստ զհիքութիւն քո, և զարմացիր՝ թէ զնարդ ակն ածէն այդպիսուդ խոտելի անձին։ Հնարս հնարեա յայլ ինչ շրջել զքանն. բայց մի՛ այնու օրինակաւ որ աւելի ևս գովութիւն բերցէ քեզ, որպէս առնէն սուտ խոնարհք և խորագէտ փառասէրք. այլ այնպիսի ինն սուրբ ճարտարութեամբ՝ զի մի ևս զքէն խորհիցին։ Իսկ եթէ ոչ յաջողիցի քեզ արգելուլ զայն՝ տուր անդէն և անդ զամենայն փառն և պատիւ Աստուծոյ, ասելով ընդ Բարուքայ. «Տեառն Աստուծոյ մերոյ՝ արդարութիւն, և մեզ ամօթ երեսաց»։

48. Որքան ընդ անձին գովեստ արժան է քեզ արամել, այնքան և արժան խնդալ ընդ գովութիւնս և ընդ պատիւս այլոց, որոց՝ հաւատս արժանաւորս զնոսա լինել, և 'ի սակս պատճառաց իսկ՝ որոց չկարես խելամուտ լինել. և յաւել 'ի նոյնս և քոյովսանն որչափ ինչ պարզմտութիւն և ճշմարտութիւն ներիցեն։ Ոչ հանդուրժեն նախանձոտք փառաւորութեան ընկեր-

րին, նուազութիւն ինքեանց վարկա-
նելով զայն. և վասն այնորիկ Ջանահնար
լինին սպրդել մուծանել 'ի ղողցան բանս
բթեցուցիչս գովեստին տուելոց այ-
լում։ Փախիր յայսպիսի բանսարկու-
թենէ։ Եւ 'ի գովելն զընկեր քո՝ տուր
գովութիւն և Աստուծոյ վասն պար-
գևացն զոր ետ նմա, և վասն օգտին որ
այնու գործեցաւ։ Եւ ասա ցանձն քո.
Բարի է Աստուծոյ առնուլ իւր սպա-
սաւորս յամենայն մարդկանէ՝ քան թէ
զնս, վասն պէսպէս թերութեանց իմոց
և անվտարանգի անձնասիրութեանս՝
որ ապականեալ պղծէ զամենայն գործս
իմ։ Ասա դարձեալ. եթէ գովութիւնք
վայելեն յաւէտ ընկերին քան քեզ՝
վասն հպարտութեան, ամպարհաւա-
ճութեան և վրիպական բարուցդ՝ որով
ընդունիս զդրուատանս։ Գլուխ բանիս.
այնքան առաւել խնդամիտ լեր ընդ գո-
վութիւն այլոց, որքան գոռոզ և նա-
խանձոտ բնութիւն քո ծանր համարի-
ցի զայն. քաւ միայն՝ եթէ ոք զախտ ինչ
գովիցէ, կամ յանարգութիւն փառացն
Աստուծոյ և 'ի գայթակղութիւն այլոց

տայցի գովեստն. օրինակ իմն, առ հե-
բեսիկոսս, առ անառակս, և առ այնո-
սիկ՝ որք զվարկ մեծարանաց իւրեանց
'ի կորուստ հոգւոց չքշեն։

49. Իսկ եթէ չարախօսութիւն ինչ
զընկերէդ լուիցես, ցաւեսջիր յանձին
քում. կարեկից լեր և տկարութեան
չարախօսին, և հնարեաց պաշտպան կալ
պատուոյ անարգելոյն. այլ այնու զգօն
և արդարադատ օրինակաւ, զի մի 'ի
կամելդ պաշտպանել՝ առաւել ևս ար-
համարհելոյ զնա տայցես պատճառս։
Ցիշեցո մերթ իրս որ մեծարելի կացու-
ցանեն զնա, մերթ և յայտնապէս ծանո
զվարկ բարի զոր ունին զնմանէ և զոր
դու իսկ ունիս. և երբեմն Ճարտարու-
թեամբ յայլ ինչ փոխեսջիր զկարդ խօ-
սիցն, կամ նշանակաւ տհաճութեան
իմացո զի ծանր է քեզ զայդ լսել։ Այ-
սու գործեսցես օգուտ մեծ և քեզ և
չարախօսին և լսողացն, և այնմ՝ զորմէ
բանն է։ Իսկ եթէ զդայցես տակաւին
հաճութիւն իմն ընդ պախարականս ըն-
կերիդ, կամ տհաճութիւն ընդ փառա-
ւորել նորին՝ առանց մերժելոյ զկիրսդ

յամենայն սրտէ, գիտասջիր զի հեռի
ես յոյժ 'ի գերազանց դանձուէ խո-
նարհութեան։

50. Քանզի առ յառաջադիմութիւն
հոգևորական չիք օգտակարագոյն քան
զառ 'ի յայլոցն ազդարարութիւն թե-
րութեանց անձինն, հարկ է ամենայն
երջք՝ զի որոց արարին ընդ քեզ զայս
սէր՝ տացես համարձակութիւն առնել
նոյնպէս յամենայն դէպս։ Եւ յետ ընդ-
ունելոյ 'ի նոցանէ զխրատն՝ ամենայն
խնդութեամբ և շնորհակալութեամբ,
բուռն հար խկոյն և կատարել. ոչ
միայն վասն բարւոյն որ յուղղութենէ
անտի, այլ և առ 'ի ցուցանել մաերիմ
բարեկամացդ այդոցիկ՝ եթէ ոչ 'ի զուր
ինչ աշխատ եղեն, և զի շնորհ մեծ ու-
նիս նոցա բարեսէր կամացն։ Ամբար-
տաւանն և 'ի կամէն իսկ ուղղել զանձն՝
չկամի թէ երևիցի տեղի տալ փրկաւէտ
խրատու այլոց, և փոխանակ գոհանա-
լոյ՝ անգոսնէ իսկ. իսկ որ Ճշմարիտ խո-
նարհն է՝ փառս անձին համարի զ'ի ներ-
քոյ ամենեցուն կալն՝ 'ի սակս Աստու-
ծոյ, և զիմաստուն խրատն զոր լսէ՝

յաստուածուստանտի համարի, ընդ ո՛ր
գործի և եկեալ իցէ։

51. Յանձն արա զքեզ Աստուծոյ բո-
լորովիմբ, և երթ զհետ սահմանելոյն 'ի
սիրական խնամոյ նորին, որպէս մա-
նուկ բարեմտին զի երթայ անխոտոր
զհետ կամաց հօրն սիրեցելոյ, որում և
զինքն գիտէ գոլ յոյժ սիրելի։ Թոյլ
տուր նմա առնել ընդ քեզ զոր ինչ և
կամեսցի, անխռով և անտրտունջ՝ ընդ
ամենայն որ հանդերձեալն են անցա-
նել ընդ քեզ. և որ ինչ միանգամ հա-
սանէ քեզ առ 'ի նմանէ՝ ընկալ խնդու-
թեամբ, վստահութեամբ և պատկա-
ռանօք։ Ապա թէ այլազգ ինչ առնիցես,
թուի թէ չէ քո ծանուցեալ զբարու-
թիւն սրտի նորա, և ոչ ունիցիս յոյս
առ նա, կամ թէ խիթայցես թէ խաբի-
ցէ ինչ զքեզ. և համառօտ ասել, թուի-
ցի իմն թէ կամիցիս ուսուցանել նմա
յանկագոյն հնարս հոգալոյ զարարածս
իւր։ Ո՜հ, քանի՜ հեռի և հակառակ է
այդ բան 'ի քաղցրութենէ և յերկեղա-
ծութենէ հոգւոյ ստուգապէս խոնար-
հի։ Խոնարհութիւն ի՞ցուցանէ զմեզ

յանչափս՝ ընդ անբաւութեամբ էութեան Աստուծոյ, այլ ընդ նմին տայ մեզ յենուլ 'ի նա՝ որպէս յապաւէն մեր միակ և 'ի մխիթարութիւն:

52. Բանդ յայտ է առանց երկբայութեան՝ եթէ առանց Աստուծոյ ոչ կարես առնել ինչ մի բարի, այլ գթիցես հանապազ, և դոյզն ինչ փորձութիւն գլորեցուսցէ զքեզ, ապա և հանապազ ծանիր զքո սակարութիւնդ և զանբաւականութիւն 'ի գործել զբարին, և զանդուլ և զանհրաժեշտ պէտս քո յօգնականութենէ նորին՝ յամենայն գործս: Զայս 'ի մտի ունելով՝ յարեաց անմեկնելի յԱստուած, որպէս տղայ մի փոքրիկ՝ որոյ ոչ ունելով յայլ ինչ յենուլ՝ կռուիցի 'ի գիրկս մօրն. և ասա ընդ մտրդարէին. «Թէ ոչ Տեառն օգնեալ էր ինձ՝ փոքր միւս ևս բնակեալ էր անձն իմ 'ի դժոխս». (Սաղմ. զԺ. 7): Գոչեա դարձեալ ընդ նմին. «Նայեա առ իս և ողորմեա ինձ, զի միամոր և աղքատ եմ ես». (իդ. 16): «Աստուած, յօգնել ինձ նայեաց, և, Տէր, յընկերել ինձ փութա» (կԹ. 1): Եւ

մի դադարիր 'ի փառաբանելոյ զԱստուած յամենայն սրտէ քումէ. գոհացիր մանաւանդ վասն օգնականութենն՝ որով կանխէ և շուրջ պատէ զքեզ. և աղաչեա յամենայն ժամ հասանել քեզ 'ի թիկունս, և տալ օգնութիւն՝ զոր ոչ կարես բնաւ այլուստ գտանել:

53. Ի վեր քան զամենայն՝ 'ի կրթութեան աղօթից 'ի դէպ է քեզ զամենի հարկանել յանձին քում, 'ի խոր խոնարհել, և սրբազան երկիւղիս զանգիտել առաջի մեծի վայելչութեան փառացն Աստուծոյ՝ առ որ համարձակիսդ բարբառել. «Խօսեցայց ընդ Տեառն, բայց ես հող եմ և մոխիր». (Ծն. ԺՁ. 27): Եւ եթէ չնորհս ինչ յաւետասպարգևս ընդունիցիս աղօթիւքդ, ընկալ զայն խորին գիտակցութեամբ անարժանութեան անձինդ. և ծանիր թէ քանի՞ առատապէս և ձրի առնէ քեզ զայդ Աստուած՝ միայն առ գթոյ ողորմութեան. և զդոյշ վեր չհամարել քեզ ինչ սեփական յայնմիկ, կամ հաձել ընդ այն անձնասիրութեամբ: Իսկ եթէ չընդունիցիս ինչ նշանակաւոր, մի դադա-

րեր և յայնժամ 'ի գոհանալոյ, յիշելով զի չէս արժանի ընդունելութեան և ոչ միոյ հնորհի. և զի տակաւին մեծ հնորհ է քեզ կալն առ ոտս Աստուծոյ. համբերութեամբ և խոնարհութեամբ ակն կալլիր այցելութեան նորա, որպէս աղքատ մի որ ընդ երկար ժամն սպասեալ մնայցէ առ դրան մեծատան, որպէս զի յ'անցանել նորին ընդունիցի տակաւ ինչ ողորմութիւն, որ բաղում այն է զի չէ բաւական 'ի ընուլ զպէտս տառապանացն։

54. Հաւատարիմ խնամով Աստուծոյ միայնոյ վերագրեա զամենայն փառս վասն յաջողութեանց և բարենշան եղեալ գործոցն 'ի քեզ յանձն եղելոց, և մի ինչ անձին սեփականեր, բայց զթերութիւնս որ ընդ գործոցդ խառնեալ իցեն. և են իսկ քո արդարև այդոքիկ. քանզի Աստուծոյ գան ամենայն բարիք, և նմա միայնում վայելէ գովութիւն և գոհութիւն. զայս ճշմարտութիւն քաջիկ տպաւորեա 'ի խորս հոգւոյդ և պահեա անմոռաց։ Եւ 'ի վերայ այսորիկ հաւատա, թէ այլ ամենայն մարդ՝ որոյ եթէ գտեալ էր որպէս գուգ զհզօր օժանդակութիւն հնորհաց, լաւ քան զքեզ յաջողէր, և ոչ իբրև զքեզ անկատար գտանիւր։ Հրաժարեաց 'ի գովեստից զոր թէ տայցեն քեզ վասն յաջողուածոցդ. և ասա, թէ չէ արժանի այդոցիկ գործի մի անարգ իբրև զիս, այլ մեծն և վեհագոյն գործաւոր, որ կարող է 'ի կամելն և փանաքի բեկորով փայտի բղխեցուցանել ջուր յորդառատ յապառաժ վիմէ, կամ գոյզն հողով թացելով բանալ զաչս կուրաց, և սքանչելիս մեծամեծս գործել։

55. Իսկ եթէ 'ի հակառակէն՝ ոչ յաջողիցիս բնաւ 'ի գործսն որ քեզ յանձնեցան, զքեզ ինքդ միայն ծանիր պատճառք ձախողելոյն, որպէս անձն առ ամենայն ինչ անբաւական, յորմէ չգուցէ բնաւ յոյս աջալրջութեան և ճարտարութեան։ Զգոյշ կայ չարկանել յայլ ոք զվնաս վրիպանացդ, և մի պատճառաբաներ առ 'ի համոզկեր լինել թէ ոչ զքէն կախէր անյաջողութիւն գործոյն. այս յաճախ սովորութիւն անկրթիցն 'ի մեռելութիւն՝ 'ի թաքուն հպարտու-

թենէ անտի յառաջ գայ, որ չհանդուրժէ նուաստութեան և արհամարհանաց. այլ դու (քաւ 'ի հարկէ պարտաւորիչ խղճի մասց) թոյլ տուր այլոց համարել որպէս կամին. և ընկալ որպէս ժառանգութիւն փարթամ՝ զամենայն եպերանս և զամօթ՝ որ անտի հասանիցէ քեզ: Զայս և ածջիր զմտաւ, զի թէպէտ և խիղճ քո ոչ սադտանիցէ զքեզ յիրիդ յայդմիկ, իբրու զի արարեր որ ինչ 'ի քո ձեռս էր առ 'ի յաջողութիւն, այլ մեղք քո, ամպարհաւաճռութիւնդ և յանձնդ ապաստան լինէ՝ 'ի բաց դարձուցին 'ի քէն զԱստուծոյ օրհնութիւնն. և բովանդակ ասել, վասն խրատելոյ զքեզ և առաւել և խոնարհեցուցանելոյ, թոյլ եա Աստուած՝ ոչ ըստ ակնկալութեան յուսոյ քո 'ի դլուխս ելանել գործոցն:

56. Ի մատչել քում առ սուրբ խորհուրդն հաղորդութեան սրտիւ բորբոքելով հրով աստուածային սիրոյ, մատո ընդ նմին և հոգի ամենեխմբ թաթաւեալ յիմացմունս Հչմարիտ խոնարհութեան. զարմացիր, թէ զիարդ Աստուած ամենասուրբն և ամենամաքուր՝ ցայդ վայր մարդասիրութեան ելիջանի, մինչև տալ զանձնառ եղկելի ոք որպէս զքեզդ. խորամուխ լեր՝ որքան կարէ 'ի քեզ՝ 'ի կենդրոն անդր խորոց անդնդոց անարժանութեանդ. մատիր մեծաւ յոյժ պատկառանաւք առ խորհուրդն երկրպագելն: Եւ եթէ հաճոյ Թուեսցի Փրկչին սիրելւոյ՝ որ ամենեին սէր է յայսմ խորհրդեան, հաղորդել քեզ զգդուանան՝ մանաւորելով յառատութենէ քաղցրութեանց իւրոց, մի և մի ինչ զանց արասցես յերկեղած պաշտամանէ՝ առ անբաւ նորա մեծվայելչութիւնն: Կայ մնա դու 'ի քում տեղւոջ, որ է հպատակութիւնն, խոտան գրիչն և ոչնչութիւն: Այլ մի անարդութիւն քո և ալէտք հիքութեանդ լքուսցեն և ամիսոփեսցեն զսիրտ քո, և մի արգելցեն զսուրբ համարձակութիւնն՝ որով անկ է քեզ մատչել 'ի սեղանն սրբութեան. այլ մանաւանդ յաւելցեն 'ի քեզ զսէրն առ Աստուած, որ յանձն առնու խոնարհել՝ մինչև 'ի լինել կերակուր մանդեան հոգւոյ քում:

57. Խանդաղատեա ցանկ գորովելով 'ի վերայ ընկերի քո, և բղխեա անսպառելի հոսանս քաղցրութեան և կարէկցութեան. խնդրեա անձկաւ մեծաւ և մի վրիպեսցի 'ի քէն առեթ օժանդակելոյ նմին. բայց ամենայն լեցի 'ի հաճոյս կամացն Աստուծոյ: Զտեաւ մաքրեա զդիտումնս շարժման գործոցդ, առ 'ի տարագրել զամենայն ընդունայնութիւն և անձնասիրութիւն. և Աստուծոյ միայնոյ վերագրեա զամենայն գործ բարի զոր թէ առնիցես. և գիտասջիր սրտի մոջք, զի ամենայն գործ բարի զոր թաքուցեալ ունիս 'ի ծածուկի՝ եթէ զի Աստուած միայն տեսցէ, լեցի քեզ յօգուտ անբաւապատիկ. իսկ որ քոյին վրիպանոք 'ի յայտ գայցէ մարդկան՝ մինչ կարէիրն թաքուցանել, կիսով կորուսեալ է և 'ի վանդի կայ սպառսպուռ կորստեան. որպէս ողկոյզ կոցեալ 'ի թռչնոյ՝ յորմէ ընդ հուպ չմնայցէ ինչ՝ բայց ջեղքն մերկք և անպտուղ:

58. Յերկիւղն փրկարար՝ զոր անկ է քեզ ունել առ ահի ստուգնկանելոյ կամացն Աստուծոյ, կցորդեսջիր և զհառաչանս 'ի խորոց սրտի՝ վասն վանդի գլորման, որ հանապազորդ 'ի վերայ կայ. որպէս զի հաճեսցի գթութիւնն Աստուծոյ պահել զքեզ 'ի չարէ այսի մեծէ: Այս սուրբ հեծութիւն է՝ զոր յոլովք 'ի սրբոց պատուիրէին, որ ընդ իւր բերէ զգուշութիւն 'ի վերայ անձին, մտադիր զգաստութիւն յամենայն գործս, խոկումն յաստուածային ճշմարտութիւնս, արհամարհութիւն կենցաղական իրաց, աղօթակացութիւն սրտի, և կատարեալ հրաժարումն յամենայնէ որ չէ Աստուած: Եւ համառօտ ասել, սա է աղբիւր ճշմարիտ խոնարհութեան կամ աղքատութեանն հոգւոյ. վասն որոյ ստեպ կրթեսջիր յայդմիկ, և եթէ հնար է՝ լեցի քեզ դա յաղօթս մշտամուտիչս:

59. Հիւանդ որ մեծաւ անձկանոք փափագիցէ բժշկութեան, սրտի մոջք զգուշանայ յամենայն արգելչաց նորին, նաև յառողջ կերակրոց չափով առնու, և գրեսթէ քննէ զամենայն պատառ՝ զի մի ինչ բերցէ առողջ-

մացն Աստուծոյ, կցորդեսջիր և զհառաչանս 'ի խորոց սրտէ՝ վասն վանդի գլորման, որ հանապազորդ 'ի վերայ կայ. որպէս զի հաճեսցի գթութիւնն Աստուծոյ պահել զքեզ 'ի չարէ այսի մեծէ: Այս սուրբ հեծութիւն է՝ զոր յոլովք 'ի սրբոց պատուիրէին, որ ընդ իւր բերէ զգուշութիւն 'ի վերայ անձին, մտադիր զգաստութիւն յամենայն գործս, խոկումն յաստուածային ճշմարտութիւնս, արհամարհութիւն կենցաղական իրաց, աղօթակացութիւն սրտի, և կատարեալ հրաժարումն յամենայնէ որ չէ Աստուած: Եւ համառօտ ասել, սա է աղբիւր ճշմարիտ խոնարհութեան կամ աղքատութեանն հոգւոյ. վասն որոյ ստեպ կրթեսջիր յայդմիկ, և եթէ հնար է՝ լեցի քեզ դա յաղօթս մշտամուտիչս:

59. Հիւանդ որ մեծաւ անձկանոք փափագիցէ բժշկութեան, սրտի մոջք զգուշանայ յամենայն արգելչաց նորին, նաև յառողջ կերակրոց չափով առնու, և գրեսթէ քննէ զամենայն պատառ՝ զի մի ինչ բերցէ առողջ-

ջուԹեանն. այսպէս և դու՝ եԹէ փա-
փագէս անձկաւ՝ զերծանել 'ի մահա-
բեր ախտէ հպարտուԹեան, եԹէ հա-
ռաչանօք ցանկաս մեծագին պարգևի
խոնարհուԹեան, արԹուն կաց հանա-
պազ՝ ջառնել և ջասել ինչ որ զայն հե-
ռացուսցէ 'ի քէն: Բարի է առ այս՝
քննել յամենայն գէպս և տեսանել, ե-
Թէ զոր հանդերձեալդ ես գործել՝ 'ի
ՀՈՒՆ իցէ խոնարհուԹեան, Թէ հակա-
ռակ նմին. և ըստ այնմ բուռն հարկա-
նել կամ 'ի բաց ԹօԹափել. և առ 'ի
յաջողել յայսմ կրԹուԹեան՝ պահան-
ջի 'ի քէն անվրէպ հաւատարմուԹիւն
առ աստուածային շնորհն որ առաջ-
նորդեն 'ի դոյն:

60. Յետ նկատման ոչնչուԹեան քո,
ստէպ աղաչանացդ, տկարուԹեանդ և
անհնարին անդնդոց հիքուԹեանդ, միւս
ևս հզոր հնարք առ 'ի ձգել ածել զքեզ
'ի սքանչելիս յայս ուղղուԹիւն, իցէ
խորհրդածելն յաՀՈՒ յանձին քում՝
այսպէս. ԵԹէ ես ոչ հոգացայց խոնար-
հեցուցանել զանձն իմ՝ ապաքէն Աս-
տուած խոնարհեցուսցէ. բարձցէ նա

յինէն զիւր շնորհն, և Թերևս Թոյլ
տացէ ինձ գԹել 'ի յանցանս մեծամեծս՝
որով խոտան գտայց յաչս ամենեցուն,
և ոչ ինչ օգտեցայց 'ի փրկուԹիւն իմ.
իսկ արդ չիցէ լաւագոյն անձամբ ան-
ձին դատ առնել՝ կամաւոր ցածուս-
Թեամբ, և ածել 'ի վերայ իմ նորանոր
հոսանս շնորհաց, քան Թէ արկանել
զիս 'ի վտանգ զկծեցուցիչ արհամար-
հուԹեանց՝ զոր կրեն յաՀՈՒ հպարտքն
և յայս կեանս, և ահեղագունից ևս՝ որ
կան և մնան նոցա 'ի հանդերձեալսն:
Այս օրինակ արդարադատ խոկումն՝
ընդոստուսցէ անշուշտ զոգիդ, և յոր-
դորամիտ արասցէ առ ամենայն հնար
ստացման սրբոյ խոնարհուԹեան՝ որ
կարող է զերծուցանել զքեզ յայնքա-
նոյ ահաւոր վտանգէ:

61. Միւս ևս խոկումն հարկեցուցիչ
'ի տալ քեզ սիրել զառաքինուԹիւն խո-
նարհուԹեան՝ օրինակն Քրիստոսի է,
զոր պարտ և արժան է քեզ հանապազ
առաջի աչաց ունել. ինքն իսկ ասաց
յիւրումն աւետարանի. «Ուսարուք
յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ»:

Եւ արդարև, ասէ Ս. Բեռնարդոս, ո՞ր հպարտութիւն է՝ զոր ոչ կարիցէ բժշկել խոնարհութիւն աստուածայնոյ վարդապետիդ։ Սարթ է ասել ստուգութեամբ ըստ տեսութեան իմիք, եթէ չիք ոք բաց 'ի նմանէ՝ որ ճշմարտապէս նուաստացեալ և խոնարհեալ իցէ. զի զնոյն կամելով մեր առնել՝ ոչ եթէ խոնարհեալ 'ի վայր իջանեմք, այլ զտեղի մեր ունիմք և կայիցիմք 'ի պատշաճելումն մեզ կարգի. քանզի արարածք գոլով անարգք, և թերևս բիւր ինաւսուց պարտականք, մնայր մեզ ակնկալութիւն ոչնչութեան յաւիտենական պատժոց։ Իսկ Յիսուս խոնարհեցաւ յոյժ յոյժ. քան զվայելուչն իւր կարգ. քանզի Աստուած է ամենազօր, էութիւն անբաւ և անմահ, տէր և իշխան ամենայն եղելոց. և կամեցեալ՝ եղև մարդ տկար, կիրքնդունակ, մահկանացու, և մահուչափ հնազանդ. էջ 'ի յետին չքաւորութիւն և յամենազուրկ աղքատութիւն. և այն որ ուրախութիւն և երանութիւն է յերկինս հրեշտակաց և սրբոց՝ թոյլ եւ ցաւոց բըռ-

նանալ յանձին իւրում, և հաճեցաւ կրել 'ի վերայ երկրի զամենայն կիրս տկարութեանց մարդկան։ Իմաստութիւնն անստեղծ և աղբիւրն ամենայն գիտութեանց՝ ոչ գարշեցաւ 'ի կարծեաց յիմարութեան. Սուրբն սրբոց և իսկականն սրբութիւն՝ հաւանեցաւ համարիլ մեղաւոր և չարագործ։ Այն որ պաշտին յերկինս յանհամար գնդից հոգւոց երանելեաց՝ յանձն էառ մեռանել անարգաբար, և 'ի խաչի վերայ աւանդել զոգին։ Եւ այն որ ինքն յինքեանէ բարի է գերազանց՝ ընդ ամենայն էանց ազգս տառապանաց։ Զայսպիսի ունելով յարացոյց խոնարհութեան՝ զի՞նչ այլ մնայ մեզ առնել որ հոգս եմք և մոխիր։ Եւ եթէ յաւելցուք յիշել զի մեղաւորք եմք և վատթարք՝ կայցէ՞ արդեօք ազդ ինչ նուաստագունութեան որ տակաւին ծանր թուիցի մեզ։

62. Զմտաւ ածջիր և զօրինակ Սրբոց հնոյ և նորոյ կտակին։ Եսայիաս առաքինագործն այն և նախանձախնդիր մարգարէն, առաջի Աստուծոյ՝ պղծութիւն համարէր զանձն, և զարդարու-

թիւն իւր՝ այսինքն զգործսն բարիս՝ իբրև զհանդերձս գարշուտակս։ — Դանիել՝ զոր Աստուած ցուցանէր Եղեկիէլի իբրև սուրբ ոք կարող 'ի զիջուցանել զցասումն Աստուծոյ, խօսէր ընդ նմա որպէս մարդ լցեալ անօրէնութեամբ՝ որուամ անկ եցէ հանապազ կոբանալ ամենեքեան և շառագունել։ — Սուրբն Գոմինիկ՝ սքանչելին անմեղութեամբ, այնքան հաւանեալ էր խոտան եմն լինել, զի կարծէր զանէծսն Աստուծոյ ի՝ջուցանել 'ի վերայ քաղաքաց ընդորս անցանէր։ վասն այնորիկ մինչև 'ի ներքս մտեալ՝ ծունր 'ի գետին եդեալ արտօսրալից աչօք ասէր։ Երդմնցուցանեմ զքեզ, Տէր, 'ի բարեգութ խնամս քո, մի հայիր 'ի մեզ եմ, և մի հեղուր զբարկութիւն ցասման քո 'ի տեղիս յայս յոր հանդերձեալ եմ մտանել։ — Ս. Փրանկիսկոս՝ որ վասն վարուցն մաքրութեան արժանի եղև պատկերակից լինել Քրիստոսի խաչելելոյ, հաւատայր աներկմիտ՝ լինել գլուխ մեղաւորաց երկրի։ և այնքան հզօրագոյնս տպաւորեալ էր 'ի նմա այս խորհուրդ՝

զի չէր ումեք հնար խլել 'ի նմանէ։ և պատճառ հաւանութեանն զայս ածէր։ զի թէ Աստուծոյ արարեալ էր յետնագունին 'ի մարդիկ այնքան շնորհս զոր առ ինքն արար, նա լաւագոյն ևս վարէր նոքիմք, և ոչ իբրև զինքն անշնորհակալու գտանէր։ Սիրէր նա կալ ընդ աղքատս և ընդ մուրացիկս, համարեալ լինել ապուշ ապիմաց, և կրել զանցս չարագունին 'ի մարդիկ։ — Այլք 'ի Սրբոց անարժանս համարէին զանձինս կերակրոց զոր ճաշակէին, օդոյ զոր շնչէին և զգեստուց զոր ագանէին։ Ոմանք՝ մեծ սքանչելիս ողորմութեանն Աստուծոյ վարկանէին զներել թողուլ նորա զինքեանս 'ի վերայ երկրի և զոչն գահավիժել 'ի դժոխս։ Այլք զարմանային թէ զի՞նչ հանդուրժէր նոցա աշխարհ, կամ զի՞նչ ոչ միաբանէին ամենայն արարածք 'ի սատակել ջնջել զնոսա։ — Գլուխ բանիս. ամենայն Սուրբք գարշեցան խորշեցան 'ի շաբոյ փառաց, 'ի գովութեանց և 'ի պատուոյ։ և վասն զի յոյժ առ խոտանս ունէին զանձինս իւրեանց՝ անդադար

ըզձիւք ըզձանային արհամարհանաց և անարգանաց։ Իսկ դու աւադիկ եղէս առաւել քան զդոսա խմաստուն, լուսամիտ և սուրբ. — ապաքէն չիշեսես և ընդ կարծ զայդ ասել, և ոչ թաքուցանել յանձնէդ՝ զի ոչ միայն չես նման նոցին, այլ և լի ես բազմապատիկ թերութեամբք։ Եւ ընդէր ոչ կամիցես լինել ըստ օրինակի նոցա փոքր և փանաքի յաչս անձինդ. կամ ընդէր ոչ համարիցես քեզ՝ որպէս նոքայն՝ փափկութիւն մեծ զնոսարհութիւնն սուրբ։

63. Առ 'ի զարդանալ առաւել քան զառաւել յայսմ առաքինութեան, և առ հաճոյ և ընտանի առնել քեզ զ'ընդվայրընկեցիկն լինել, օգտիցէ քեզ յոյժ ածել յաշխատ զմտաւ զնշանանս ինչ կամ զնախատինս նշաւակիչս՝ որոց մարթ եղէ պատահել քեզ, և կրթել զքեզ յայնժամ 'ի ներքուստ, ('ի բաց հերքելով զամենայն զզուանս բնութեանդ) յընդունել զնոսին որպէս պարգևս մեծատուրս, անխաբելի նշանակս սիրոյ Փրկչին, և ստոյգ հնարս սրբակերտութեան անձինդ։ Առ 'ի ժամանել յայս կէտ՝ հարկ եղէ թերևս քեզ ժուժկալել բուռն հակառամարտութեանց, այլ մի վհատիցիս. համբեր մեծախոհութեամբ, և զդեմ կացջիր յարձակմանց պատերազմին, մինչև առ ոտն հարցի ամբարտաւանութիւնդ, և զդայցես պատրաստ լինել հաստատուն մտօք 'ի կրել յօժարութեամբ զամենայն վասն սիրոյն Քրիստոսի։ Զայս արարեալ՝ յաղթանակս հանապազօր կանգնեացես, և 'ի սուղ ժամանակի յառաջադէմ գտցիս 'ի սուրբ հրահանգս ուսանայնացուցանելոյ զանձն։

64. Մի անցցէ զքեզ օր՝ յորում ոչ դիցես անձին քում կշտամբանս՝ զոր ոխերիմ թշնամիք քո կարէին դնել քեզ. և զայս ոչ այնքան առ ամբել և ընտելացուցանել քեզ զայնոսիկ, որքան առ ունել զքեզ միշտ կոխան և խոտան յաչս քո։ Մանաւանդ՝ եթէ դէպ լիցի քեզ 'ի մրրկի բռնաւոր փորձութեանց՝ զգալ յոյզս կարձմտութեան և տրտնջանաց առ 'ի ներքուստ՝ վասն զայդ օրինակ փորձելոյ զքեզ Աստուծոյ, սասանեա խստիւ անձին քում վասն այդպիսւոյ

ապստամբութեան. սրտմտեաց քեզ ին-
քեան՝ զի տակաւին լցեալ ես գոռոզու-
թեամբ, և ասա ցանձն քո. Զի՞նչ լշ-
խէ մեզաւոր հէք և անպիտան գանգա-
տել ընդ այս վիշտ. միթէ չիցեմ՞ ես ար-
ժանի ամենապատիկ դառնագոյն պա-
տուհասից. ծանրութիւն մեղաց իմոց
պարտաւոր առնէ զիս դժոխոց, և
զի՞նչդ ժտեցայց տակաւին քրթմնջել
ընդ արկածս ինչ ժամանակաւորս և
անտեւականս՝ որ ոչինչ մի են: Մի՞թէ մո-
ռացո՞նք եղեն քեզ, հոգի իմ, եթէ խո-
տումն և վիշտք Ճշմարիտ կերպարուր հա-
ցի են քո և մեծապարթամ տուրք ողոր-
մութեան Տեառն քո՝ առ 'ի թափել
զքեզ 'ի թշուառութենէդ և 'ի չքաւո-
րութենէ. և զի՞նչդ ոչ ընդունիցիս
զայդոսիկ աղերսիւ գոհութեան: Վա՜հ,
մերժելդ զայդ՝ զքեզ անարժան կացու-
ցանել է այդմ, և խոտել զգանձն պա-
տուական, որ թերևս բարձցի 'ի քէն և
անցցէ յայլոց ձեռս՝ որ լաւ ևս յար-
գեսցեն զայն. «Տացի ազգի որ առնիցէ
զպտուղս նորա». (Մատթ. ի՞ա. 43):
Կամք էին Աստուծոյ վերամբառնալ

զքեզ 'ի դասս հաճեցելոցն իւրոց՝ Ճըշ-
մարիտ աշակերտաց Գողգոթայի, և
դու վատաբար լքանես փախչիս 'ի պա-
տերազմէ. առանց մարանչելոյ ոչ է հնար
պսակիլ, և ոչ առնուլ զվարձս առանց
բառնալոյ զծանրութիւն աւուրն: Որ-
պիսի՞ Ճգանց ոչ տանիցին դատապար-
տեալքն՝ առ հասանել ըմբռնել զերա-
նուութիւնն որ առաջի դնի քո, եթէ գոյր
նոցա տուեալ ժամանակն և ընդհէք՝ որ-
պէս յայժմուս քեզ: Այսպիսի և որ
սոցին նման կշտամբանք վառեալ բոր-
բոքեսցին զեռանդն քո, և յորդորես-
ցեն սիրել զկեանս անինչս և տառա-
պեալս, ցածուցեալս և չքացեալս, ըստ
տարազու Փրկչին մերոյ:

65. Որքան և անխառով կայցես յա-
նարգիլ և 'ի խոտել քում՝ մի վատա-
հասցիս տակաւին ունել խոնարհու-
թիւն անքոյթ և յաղթական. քանզի է
երբեք զի ընդարմացեալ հանդարտե
հպարտութիւն, և յառաջին դէպս առ-
թիլ՝ զարթուցեալ ընդոստնու, և ան-
կարծելի նախճիրս գործէ 'ի հոգւոջ:
Արթուն կաց հանապազ 'ի կրթութիւն

ծանօթութեան անձինդ, 'ի հրաժեշտ
փառաց, և 'ի խնդիր նուաստութեան։
Եթէ այսու օրինակաւ գամագիւտ լի-
նիցես մեծահարուստ ժառանգութեան
այսմ առաքինութեան՝ լեր անկասկած
և 'ի չկորուսանելոյ զնոյն. զի առ 'ի
պահել զպարգև խոնարհութեան՝ պէտք
են հանապազ խոնարհել։

66. Յօժանդակութիւն գիւտի շնոր-
հեդ այդմիկ՝ կալ քեզ բարեխօս և պաշտ-
պան զամենասուրբ Կոյսն, որ՝ ըստ Սըր-
բոյն Բեռնարդոսի՝ խոնարհեցաւ քան
զամենայն արարածս, և խորովք խո-
նարհութեանն՝ որ գերագոյն էր ընա-
ւից՝ փոքր քան զամենեսին եղև. և սո-
վին հիասքանչ պատրաստութեամբ ձը-
գեաց յինքն զլիութիւն շնորհաց, և
Աստուծոյ մայր լինելոյ եղև արժանի։
Ի նա և մայր գթած և գորովասէր, և
գիւրապատրաստ 'ի լսել ամենեցուն.
վստահօրէն ապաստան լեր 'ի գիրկս
նորա. երդմնեցո զնա ստանալ քեզ զա-
ռաքինութիւն՝ որ այնքան մեծարոյ եղև
յաչս նորա, և մի երկբայիցիս ընդ հա-
ճութիւն խնամոց նորին. զի հայցեսցէ

զայն 'ի նմանէ՝ որ յարդարէ զխոնարհս
և յամօթ առնէ զհպարտս. և զի առ ա-
մենայն բաւական է նա առ Որդւոյ իւ-
րում, առանց երկբայութեան և լսելի
լեցի։ Այլ նա գիմեա յամենայն վիշտս
քո, յամենայն պէտս, յամենայն փոր-
ձութիւնս. նա եղիցի ապաւէն քո, հաս-
տատութիւն քո և միխիթարութիւն քո։
Այլ առաջին և մեծ շնորհս զոր անկ է
քեզ խնդրել 'ի նմանէ՝ խոնարհութիւնն
է սուրբ. մի կասիր 'ի թախանձելոյ՝
մինչև ընկալցիս զայն. և մի զանգիտեր
ձանձրացուցանել ժուութեամբդ. սիրէ
նա զանդադար թախանձանս որ առեալ
ելցէ փրկութեան հոգւոյդ, և առաւել
հաճելի լինելոյ անձինդ Որդւոյ իւրում
և Աստուծոյ։ Եւ առ 'ի բռնադատել
նմին զնա յօժանդակութիւն քեզ՝ բա-
րուրս փարելիս արկ առ նա զնորա խակ
խոնարհութիւնն, որով արժանացաւ
վերանալ 'ի պատիւ աստուածամայրու-
թեան, և զաստուածափառ մայրու-
թիւնն՝ որ խոնարհութեանն եղև պը-
տուղ։

67. Դարձեալ, կալ քեզ առ այս միջ-

նորդ զՍուրբն յորս առաւելապէս փայ-
լեաց առաքինութիւնդ այդ գերուն ակ.
զոր օրինակ, սուրբ հրեշտակապետն
Միքայէլ, որ առաջին գտաւ 'ի խոնարհս,
որպէս և Աբրուսեակն 'ի հպարտս. —
սուրբ Մկրտիչն Յովհաննէս, որ ըստ
իմաստասիրելոյ Ս. Գրիգորի Մեծի,
յայն բարձրութիւն սրբութեան ժա-
մանեալ էր՝ զի Մեսիա համարեալ լե-
նէր. և սակայն՝ ըստ Քրիստոսի իսկ
վկայութեան, այնպէս առ փոքր ոչնէր
զանձն իւր. — Սուրբն Պօղոս, Առա-
քեալն այն յաւետաւնորհ, որ մինչև
յերրորդ երկինս վերացաւ, և յետ լսե-
լոյ զգաղտնիսն Աստուծոյ՝ չհամարէր
ինչ զանձն բայց արուսն առաքելոց, ո-
րոց և ոչ անուանակցութեան դոլ ար-
ժանի, նա և ոչինչ մի լինել. (Բ Կորն.
Ժբ. 11): — Ս. Գրիգոր Պապն, որ ա-
ռաւել ջանահնար եղև փախչել 'ի քա-
հանայապետական աթոռոյն՝ քան փա-
ռասէրք աշխարհի առ հասանել 'ի բարձս
աւագութեանց: — Սուրբն Ալեքսիա-
նոս, որ առաւել լաւ համարեցաւ 'ի
բնիկ 'ի տան իւրում նախատակոծ լի-

նել և զզուիլ յիւրոց ընդհասուն ծառա-
յից, քան զամենայն շուք և մեծարանս
զոր կարէր ընդունել: — Սուրբն Ալոյս
Գոնծակեան, որ ոչ աննչան տանուտե-
րութեան պայազատ գոլով՝ խնդու-
թեամբ հրաժարեցաւ, և փոխանակ
փայլման պերճանաց՝ ընտրեաց կեանս
գձուձս և մեռելականս:

68. Ի վերայ այսոցիկ ամենայնի՝ յուշ
լիցի քեզ, զի 'ի կիրառութեան խոր-
հրդոց խոստովանութեան և հաղոր-
դութեան՝ գտցես Ճոխագոյն օգնակա-
նութիւն առ 'ի տեսել տոկալ 'ի կրթու-
թեան խոնարհութեան: Առաջինն 'ի
խորհրդոցս՝ յորում յայտնեմք մարդոյ
մեզ նմանելոյ զթաքնագոյն և զամենալի
կարիս հիքութեան մերոյ, մեծագոյն
գործ խոնարհութեան է՝ օրինադրեալ
'ի Քրիստոսէ եկեղեցւոյ իւրում: Իսկ
խորհուրդն գոհութեան՝ յորում ընդ-
ունիմք գոյապէս զԱստուած մարդա-
ցեալ և ունայնացեալ առ սէր մեր, հե-
ասքանչ վարժարան է խոնարհութեան
և դիպողագոյն գործ 'ի ստացուած նո-
բին: Իշխեցէս յերկուանալ թէ չհա-

զորգիցէ քեզ նա զքանչելի առաքինութիւնն, յորժամ սիրան սրբազան, սիրան այն գիւրագորով և հեզահամբոյր, հնոցն սիրոյ և գթութեան, զեռեղեցի 'ի վերայ քումս սրտի, և դու ամենայն եռանդեամբ ըղձից հայցեսցես զայն 'ի նմանէ։ Մատիր ուրեմն յաճախակի որքան 'ի ձահ է քեզ, առ խորհուրդն այն երկրպագելի սրբամաքուր պատրաստութեամբն՝ զոր 'ի քէն պահանջէ, և մի երկմտիր՝ զի գացես 'ի նմին զմանանայն թաքուն, որ միայն մեծաջան փութով խնդրողացն տուեալ լինի։

69. Յետ ամենայնի, տես, մի գուցէ վհատեալ լքանիցես վասն դժուարութեանց զոր կրիցես 'ի սկզբան անդ կըրթութեանցս այսոցիկ նշանակելոց, և վասն հակառակութեանց՝ զոր 'ի քումիսկ 'ի բնութեան զգայցես։ Մի՛ լսցէ քեզ ասել որպէս վատասիրտ աշակերտքըն, « Խիստ է բանդ այդ, ո՞ կարիցէ լսել դմա »։ Ծանր է կրթութիւնդ, և ո՞ կարիցէ անսալ և կատարել։ Ճշմարտութեամբ ասեմ, զի դառնութիւնք զոր 'ի սկզբանն զգայցես՝ փոխիցին ընդ

հուպ 'ի քաղցրութիւնս և 'ի մխիթարութիւնս անճառելիս։ Սուրբ յարատևութիւն 'ի կրթանդ՝ զերծուսցէ զքեզ 'ի բազմապատիկ տատամսութեանց ոգւոյ և վարանաց, և մուծցէ զքեզ 'ի վիճակ խաղաղութեան և անդորրու, յորում սկսանի հոգի վայելել զբարեբաստիկ երանութիւնն որ պատրաստեալ է նմա յերկինս։ Իսկ եթէ սրտաթափ լեալ ոչ հարկանիցես բուռն զհնարից և զձգանց լինելոյ ճշմարտիւ խոնարհ, կացցես մնասցես հանապազ 'ի ծուփս անդոհականս, տատանեալ տագնապաւ և անհանգստութեամբ, անտանելի եղեալ քեզէն քումս անձին, թերևս և այլոց. և որ մեծն է, գուցէ և վանդ կորստեան հոգւոյ քո գործիցես։ Այս գէթ աներկբայ է, զի փակեսցին քեզ դրունք կատարելութեան. քանզի յայտ իսկ է զի խոնարհութեամբ եւեթ մարթ է մտանել ընդ այն։ — Քաջալերեաց ուրեմն սուրբ եռանդեամբ, և մի և մի ինչ լքուսցէ զքեզ։ Ամբարձ զաչս քո 'ի վեր, և տես զՅիսուս Քրիստոս՝ որ բարձեալ զխաչ իւր ցուցանէ

զՀանապարհ խոնարհութեան և համ-
բերութեան, զոր և հորդեցին այնքան
սրբոց բազմութիւնք՝ որք արդ վայելեն
ընդ նմա 'ի փառս. նա ինքն հրաւէր
կարգայ քեզ և կարեկցաբար յորդորէ
հետեւել ընդ շաւիղս զոր ինքնին կո-
խեաց, և ընդ նոյն ընթացան հաւատա-
րիմ նմանողք լաւութեանց իւրոց։ Զմը-
տաւ ած զՀրեշտակն որք տենչացեալ
քումփրկութե՛ երդմնեցուցանեն զքեզ
երթալ ընդ նոյն հետս՝ իբրու միայն ան-
խոտորս և միայն բաւականս 'ի տանել
հանել զքեզ յերկինս, և ուսնել զաեղի՝
յորմէ անկան հրեշտակքն ապստամբք՝
բարձրամտութեամբ իւրեանց։ Զմտաւ
ած և զբազմութիւն Սրբոցն որք ձայն
եդեալ աղաղակեն առ քեզ, թէ ոչ այլ
աղդ հասաք յայս անբաւելի փառս յոր
վայելեմքս՝ բայց կամաւոր նուաստու-
թեամբք և վշտակրութեամբք. և ահա
փութան իբրև ընկեր առ ընկեր խրա-
խոյս կարդալ փարելի ասել քեզ՝ աս-
աստին 'ի սկզբան փորձոյ տենչանացդ,
և երդմնի առնեն զքեզ՝ մի դալ մի դա-
դարել և մի շիջուցանել զկայծն վառեալ

'ի սրտիդ։ — Արդ, ծն առեալ զբրացիր
և քաջ լեր, և ձեռն արկ անյապաղ 'ի
գործդ մեծ և կարևոր։ Յուշ լիցին քեզ
սրբոցան պարտականութիւնք՝ որով
կապեալդ ես 'ի քրիստոնէութեան, և
երկիր, գուցէ հաւատադրուժ գտանի-
ցիս խոստմանցդ առ Աստուած։ Երանի՜
և բիւր երանի՜ քեզ, եթէ այսու վա-
ռեալ մտաք՝ հրահանգ մեծ և կարևոր
քեզ զխոնարհութիւնն առնիցես, առ
'ի Ժառանգել զմեծութիւնսն յաւիտե-
նականս։

70. Եւ յաւարտ բանիցս յաւելից և
ասաս։ Աստուածային վարդապետն մեր
պատուիրեր աշակերտացն, նաև յետ
կատարելոյ զամենայն հրամայեալսն ին-
քեանց՝ խոստովանել զանձինս ծառայս
անպիտանս։ Ըստ այդմ օրինակի և դու,
թէպէտ և ամենայն խնամով և սրտի
մտաք կրթեսցիս 'ի խրատաքս, զնոյն բան
ասա անվրիպ, ծառայ անպիտան եմ. և
հաւատա առանց երկբայութեան, զի
թէպէտ և ստատցիս զանգիտն խոնար-
հութիւն, ոչ ջանից և արդեանց քոց
պատուղ ելցէ ստացուածն այն, այլ ձրիա-

տուր կամացն Աստուծոյ և անբաւա-
պարգև նորա ողորմութեանցն։ Գոհա-
ցեր զնմանէ մինչև 'ի մահ՝ վասն մեծա-
շնորհ բարեացն՝ ամենայն գորովանօք և
խանդաղակաթ աղերսիւ սրտիդ, որքան
և իցէ քեզ կար. և աղաչեա զօր ամե-
նայն՝ պահել քեզ անկորուստ զգանձդ
զայդ՝ մինչև ցժամն յետին, յորում ար-
ձակեալ հոգւոյ քոյ յամենայն կապա-
նաց՝ թռուցեալ վերասցի 'ի ծոց Արար-
չին իւրոյ, 'ի վայելս փառաց որ պատ-
րաստեալն է խոնարհաց։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Բաղցրացելոց կամ օգտելոց՝ ի խրա-
տուց սակեղնիկ գրքուկիս՝ մի անհաճոյ
Թուեսցի և դուշնաքեայ Յաւելուածս,
զոր՝ ի միջոյ բազմախուռն և բազմահա-
րուստ գրուատեաց հոգեկիր արանց՝
ընձեռեմք, եթե զքրիստոսաշնորհ Եր-
կուս լուսոյս այրոցն կամ Երկուս դա-
հեկանս Սամարացւոյն, զերկուց աս-
տուածախոհից ներանձնացելոց բանս.
մի, զհին եգիպտացի Ճգնաւորին Եսա-
յեայ, որ՝ ի Հարանց վարս՝ ի Խոնար-
հութեանն Ճառի յեռեալ կայ, և միւս՝
զմերասեռ Ս. Ներսիսի Լամբրոնացւոյ,
որ՝ ի մեկնութենէ ձիջ Սաղմոսի. շատ
համարեալ զայս երկուս և երիս վկայս

'ի հաստատութիւն ամենահաստատ և անկարօտ բանին Քրիստոսի. «Ամենայն որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի. և որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի». և իւրոյ ամենասքանչ Մօրն, թէ՝ «Փակեաց զհզօրս յաթոռոց, և բարձրացոյց զխոնարհս»։

ՎԱՍՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

Ա.

Բանք Հօրն Եսայեայ.

Սէր երկրաւոր մեծութեան և փառաց՝ ծնանի զստութիւն. իսկ խոնարհութիւն՝ ծնանի զերկիւղն Աստուծոյ 'ի սրտի։ Եւ դու մի կամեսցիս սիրելի մեծամեծաց լինել և իշխանաց աշխարհի, զի մի զրկեսցիս 'ի փառացն Աստուծոյ։

* Յորժամ կացցես յաղօթս, եթէ խոնարհութեամբ արասցես, և զանձն քո անարժան համարեսցիս, ընդունելի են Աստուծոյ. իսկ եթէ ամբարտաւանիցես սիրտ քո, և յիշեսցես զայլ ոք ծոյլ՝ և դատեսցես զնա, ընդունայն է աղօթք քո։

* Ընդէր երանելի լցէ խոնարհն. — վասն զի ոչ ունի լեզու բամբասել զոք կամ ընդդիմանալ զոկողին իւրոյ. և ոչ աչս ունի՝ զի տեսցէ զպակասութիւն ընկերին. ունին ոչ ունի՝ զի լուիցէ զանօգուտն. նա և ոչ բերան ունի՝ չարախօսել զոք կամ զեղբայր իւր, և ոչ քննել զայլոց զյանցանս, այլ միայն զմեղս իւր: Եւ խաղաղարար լցէ առ ամենեսեան, ըստ բանին Տեառն: Բայց այս լցէ իրաւացին. զի թէ պահեսցէ ոք զվերս աւուրբք, և զամենայն առաքինութիւնս կատարեսցէ, այն ամենայն առանց խոնարհութեան՝ ոչ ինչ են և վայրապար յոյժ:

* Որ ոք ստանայ զխոնարհութիւն՝ տեսանէ նա զմեղս իւր. և որ չոգայ զհետ խոնարհութեան և ողբոց, արտաքսեն սոքա 'ի սրտէ նորա զամենայն չար խորհուրդս, և մնուցանեն զանձն նորա ամենայն առաքինութեամբ. և ոք ունիցին ողբք և խոնարհութիւն, ոչ կա յաղթեսցեն զնա պատկառանք մարմնականք. այլ արհամարհանք զոր արհամարհիցի նա 'ի մարդկանէ՝ զէն

նորա լիցին, և պահեն զնա 'ի սրտմտութենէ և 'ի չարի չար հատուցանելոյ. և ուսուսցէ համբերել ամենայն չարեաց: Եւ յայսց ամենայնէ ոչինչ մերձենայ 'ի խոնարհն:

* Անկանել առաջի Աստուծոյ գիտութեամբ, և հնազանդել պատուիրանացն՝ խոնարհութեամբ, բերէ 'ի մարդ զսէրն Աստուծոյ և զանախտութիւն. իսկ խոնարհութիւն է համարել զանձն մեղաւոր քան զամենայն մարդ, և արհամարհել զինքն՝ երբև թէ ոչ երբէք բարի գործեալ լիցէ: Եւ գործք խոնարհութեան այս ինչ է. Լռութիւն միշտ. և ոչ պատերազմել ընդ ումեք, և ոչ ումեք հակառակել, և հնազանդել բոլորից. և 'ի խոնարհ նայել ակամբ միշտ. և առաջի աչաց ունել միշտ զմահ. և անսուտ գոլ 'ի բանս. և ոչ դիմաբանել աւագացն, և ոչ հաստատել զիւր բանն. և ունել համբերութիւն մտաց. և ատել զհանդիստն, և համբերել անարգանաց. և արթուն և զգաստ լինել. և հատանել զկամս իւր. և ոչ բարկանալ ումեք. ոչ ունել նախանձ կամ հեռ. և պարապել

զօրհանապազ յողբս։ Այս է չափ խոնարհութեան. և զի որ ստանայ զխոնարհութիւն նա յանձն իւր ժողովէ զյանցանս եղբօրն, և ասէ, Ես մեղայ. իսկ որ ատեայ զեղբայրն՝ զանձն խմաստուն և արդար ասէ, և յամօթ առնէ զեղբայրն. իսկ որ զանձն պատկառէ՝ նա այլուամ ոչ վնասէ։

* Մի խօսեցի լեզու քո, այլ գործք քո. և եղեցին բանք քո խոնարհ քան զգործս քո. և մի ինչ խորհեսցիս արտաքոյ մտաց. և մի վարդապետեր արտաքոյ խոնարհութեան. որպէս զի կարասցէ ընդունել երկիր զսերմն քո։

* Ոչ իցէ խօսելն իմաստութիւն, այլ իմաստութիւն իցէ ճանաչելն զժամանակ խօսելոյ, թէ երբ իցէ ժամ խօսելոյ. և զբանն իմաստութեամբ ասէ և իմաստութեամբ խօսեսցիս. և զգոյշ լեր նախ քան զխօսելն քո. և տուր պատշաճ պատասխանի. և 'ի գիտութեան տգէտ լեր դու, զի զերծցիս 'ի բազում վնասաց։ Քանզի ինքն իւր բարդէ վնասս՝ որ ցուցանէ զանձն իմաստուն. վասն այսորիկ մի պարծեսցիս 'ի վերայ գիտութեան քո. զի ոչ ոք գիտէ որպէս է ոչ բնաւ։ Եւ կատարումն ամենայնի՝ պատկառանք է. իսկ խոնարհելն քո 'ի ներքոյ ընկերին՝ ընդ Աստուած միաւորէ զքեզ։

* Յիշեսցուք, եղբարք, զայն՝ որ ոչ ունէր ուր դնէր զգլուխ իւր. և 'ի միտ առցուս, եղբայր, և մի բարձրամտեսցես. տես, թէ ով էր, և կամ զինչ եղև վասն քո. թագաւոր էր, և եղև օտար և պանդուխտ վասն քո։ Ո՛վ անպատմելի մարդասիրութեան քո, Տէր. ընդէ՞ր այդպէս խոնարհեցար յաղագս մեղուցեալ ծառայիս, մինչ զի արարիչդ ամենայնի ոչ ունէիր ուր զգլուխդ դիցես. իսկ մեք ապերախտքս և ամենայն նուաստ և անարդ խոնարհութեան արժանիքս՝ մեծութեան և պատուոյ ցանկամբ անցաւորիս։ Արդ ընդէ՞ր շփոթեալ ես, ով եղկելի մարդ, և զինչս ժողովես. և ընդէ՞ր կուրացեալ ես անառակութեամբ. և կամ ընդէ՞ր հետևեալ ես պատրանաց կենցաղոյս. և ընդէ՞ր ոչ ստանաս զհանդերձեալ բարիսն։ — Արդ զայս ամենայն քննեսցես, և զլաւագոյնսն ընտրեսցես։

Բ

Ս. Ներսիսի Լամբրոնացւոյ ասացեալ.

«Երանի՛ որ ելից զցանկութիւն իւր 'ի նոցանէն»: Ոչ այլ ինչ իմանամ զլը-
ռումն ցանկութեանն, ուստի և երա-
նութիւն, բայց միայն զզղջումն և զխո-
նարհութիւնն: Զի յորժամ ետես՝ թէ
այս նեռիւքս խոցոտին թշնամիքն (դևք),
ապա բաղձայ և ասէ. Երանի՛ որ ժամա-
նեալ էր 'ի կատարեալ չափ խոնարհու-
թեանն, և լցեալ զցանկութիւն իւր 'ի
զղջմանէ և յապաշխարութենէ: Եւ ո՞ր
է կատարեալ չափ խոնարհութեանն.
— Մահուչափ հնազանդութիւնն, զոր
արար Քրիստոս և ուսոյց մեզ. և է դը-
ժուարաստանալի քան զամենայն առա-
քինութիւն. որպէս քննեցին հարքն և
գրեցին: Վասն այնր առեալ զանախ-
ութիւնն և զսրտի սրբութիւն, և գայ-
թակղեալ նոքօք՝ փափագէ և ցանկայ
խոնարհութեանն՝ որ անսայթաքելի է

Ճանապարհ. և ասէ. Երանի՛ որ ելից
զցանկութիւն իւր 'ի պէսպէս մասանց
խոնարհութեանն: Նախ, արհամարհել
զանձն. յետ այնր՝ հնազանդել այլոց.
ապա, ոչ զկամս նախամեծար առնել. և
այլ բազումմասունք խոնարհութեան.
զոր թէ ստանայ անախտ սիրտն և ան-
ցաւն, ոչ ամաչէ յորժամ խօսին թըշ-
նամիք դևքն 'ի դրունս մտացն՝ զչար
խորհուրդսն: Զի նոքա ստիպեն յամ-
բարտաւանութիւն, և նա խոնարհու-
թեամբն մրցի և անկործան մնայ. ապա
թէ չունիցի զայս՝ 'ի խօսից նոցա պարտ-
ի, և յինքնահաճութիւնն գայթակղի,
և կործանեալ՝ ըստ թղլ տալոյն Աստու-
ծոյ, վերստին 'ի մարմնական ախտս,
անբերելի տիրէ նմա ամօթ յԱստուծոյ.
զի Ճաշակեաց յերկնաւոր պարգևացն,
և հաղորդս եղև Հոգւոյն Սրբոյ, և զզը-
ռութիւն հանդերձեալ աշխարհին իմա-
ցեալ, և գտաւ վերստին ընդ մարմնա-
կան ախտս շաղախեալ. քան զոր չիք
ինչ ամօթոյ և աղէտից արժանի:

Զայս ծանուցեալ մեր՝ աղաղակես-
ցուք առ Քրիստոս. Բարի է ինձ՝ զի

խոնարհ արարեր զիս, որպէս ուսայց զկրաւունս արդարութեան քո. և բուռն հարցուք զկատարեալ և զծայրագոյն աշտիճանէն բարձրութեանն, զխոնարհութենէ. որպէս ասաց Սուրբն 'ի Հարս (Աբբայն Մովսէս). « Որ խոնարհի՝ խոնարհեցուցանէ զդէս. և որ ոչ խոնարհի՝ խոնարհի 'ի դիւաց »։ Զի յամենայն առաքինութեանց յեղանակս կարեն նոքա գամագիծ գտանել, բայց յայսմանէ. որպէս և ասէր ինքն բանսարկուն առ Մակար. Ո՛վ Մակար, ասէ, պահեաց դուք, իսկ ես ինաւ ոչ ուտեմ. հսկեաք, ես հանապազ արթուն եմ. բայց մի ինչ է որով պարտեալ զիս, Խոնարհութեամբ ձերով։

Բայց դու ինձ խոնարհութիւն զայն իմա ըստ կարգի՝ որ յետ սրբութեան սրան է և անախտութեան մարմնոյ. զի ընկղմելոցն յախտս՝ դիւրաւ է խոնարհութիւնն և դժուարին սրբութիւնն. իսկ 'ի սրբութենէ անախտութեանն նաւահանգիստն ժամանելոց և զխոնարհութենէ բուռն հարելոց, աշտիճան է կատարեալ և անուանի. ըստ որում և

ասէ սոյն մարգարէ. « Զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ »։ Զի որիշ սոքա 'ի միմեանց՝ թերիք են և դիւրինք. իսկ 'ի միասին եկեալ սրբութիւնն և խոնարհութիւնն՝ տեղի հանգստեան է աստուածութեանն և անուանի. ըստ այնմ. « Ես յո՞ հանդեայց՝ եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս, և ոյք դողան 'ի բանից իմոց »։

Որ և զմեզ ընկալցի սրբութեամբ և խոնարհութեամբ՝ յաթոռ փառաց իւրոց. և նմա փառք յաւիտեանս. ամէն։

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ Ի ԲԱՐԶՈՒՆՆՈ ԲՆԱԿԵԱԼ, ԵՒ ԶԽՈՆԱՐՀՍ ՏԵՍԱՆԷ ՑԵՐԿԻՆՍ ԵՒ ՑԵՐԿՐԻ։ — Սաղմ. ՀԷ.

Հ. Ս. Խ. Հ. ԳՐԱԴԱՐԱՆ
Հայ. Գրադարան Библиотека
Գ. Ա. Ալիշանի անվան
7/XI — 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2n

0014988

2015

2001